№ 147 ԿԻՐԱԿԻ 7 ՅՈՒԼԻՍԻ 1913 ԿԻՐԱԿԻ 7 ՅՈՒԼԻՍԻ № 147

ՔԱՌԱՍՈՒՆԵՐԿՈՒԵՐՈՐԴ ՏԱՐԻ

Տարեկան գինը 10 րուբլի. կէս տարվանը
և 7 ամսվանը 6 րուբլի.
Առանձին համարները ԱՄԷՆ ՏԵՂ 5 ԿՈՊ.
Թիֆլիսում գրվում են խմբագրատանը.
Մեր հասցէն՝ Тифлисъ, редакція «Мшакъ»
Сергіевская ул. № 5.
Tiflis, Rédaction „Mschak"
Խմբագրատան տելեֆօն № 2—53.

ՄՇԱԿ

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2
(բացի կիրակի և տօն օրերից)
Յայտարարութիւն ընդունվում է ամէն լեզվով
Յայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր տողատեղին 10—20 կոպ.
Տպարանի տելեֆօն № 67.

ՄՇԱԿ

Հասցէն՝ ТИФЛИСЪ, Редакція „МШАКЪ".
TIFLIS, Rédaction du journal „MSCHAK".

ՅՈՒԼԻՍԻ 1-ԻՑ ՄԻՆՉԵՒ ՏԱՐՎԱՑ ՎԵՐՋԸ 6 ՌՈՒԲ.

Բաժանորդագրվել կարելի է իւրաքանչիւր ամսի 1-ից սկսած։

Հասցէն փոխելու համար պէտք է ուղարկել նաեւ հին հասցէն եւ 40 կ. նամականիշով, ՀԻՆ ՀԱՍՑԷՆ եւ 40 կ. չուղարկողների խնդիրները՝ հասցէն փոխելու վերաբերմամբ՝ ԿԸ ԹՈՂՆՎԵՆ ԱՆՀԵՏԵՒԱՆՔ։

Յայտարարութիւնների համար պիտի վճարել I երեսի վրա իւրաքանչիւր տողատեղին (պետիտ)—20 կ., IV երեսի վրա—10 կոպ.։

Կովկասից դուրս գտնվող անձերի և հիմնարկութիւնների յայտարարութիւնները բացառապէս ընդունվում են՝ Մոսկվայում—Центральная Контора Объявленій Торг. Дома Л. и Э. Метцль и К°, և նրա բաժանմունքներում—Պետերբուրգում՝ Морская, 11, Վարշավայում՝ Маршальковская, 130, Վիլնոյում՝ Большая 38, Պարիզում՝ 8 Площадь Биржи.

1913 թիւ տարեկան բաժանորդները, որոնք առ 1-ն յունվարի 1914 թ. լրիւ վճարած կլինեն բաժանորդավճար 10 րուբլին, ձրիաբար կը ստանան հետեւեալ 2 գրքերը. 1) «Մշակ» եւ հայ կինը», 2) «Մշակի» քառասնամեակ»։

ԱՊԱՌԻԿ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ ԿԱՄ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ ՉԷ ԸՆԴՈՒՆՎՈՒՄ

ՍՕՖԻԱ ՄԱՆԴԻՆԵԱՆԸ իր զաւակներով, ՀԵՂԻՆԷ ԱՐԻՇԵԱՆԸ, ՍԱԼՈՄԷ ՇԱՀԲՈՒԴԱՂԵԱՆԸ իրանց ամուսիններով, ԳԱՅԻԱՆԷ և ԳՐԻԳՈՐ ԴԱԻԹԵԱՆՆԵՐԸ յայտնում են

ԱՄԻՐԱՆ ՄԱՆԴԻՆԵԱՆԻ

յիշատակը յարգել ցանկացող ծանօթներ-բարեկամներին, որ այսօր, կիրակի, յուլիսի 7-ին, առաւօտեան ժամը 12-ին, պատարագից յետոյ Վանքի մայր-եկեղեցում կը կատարվի նրա մահվան քառասնօրեակի հոգեհանգստեան կարգը։

554. 1—1

ՆԿԱՐԻՉ

Ա. ՑԷԹՎԱՃԵԱՆԻ

ԱՆԻԻ ԱԼԲՈՄԸ

գունատիպ

Լոյս տեսած Վիէննայի Գռաֆիշէ Քունստ Ինդուստրի Կայսերական Ընկերութեան տպարանում։

ՎԱՃԱՌՎՈՒՄ Է Թիֆլիսում. մեծաքանակ—Մաթիճեանցի խանութում (Մայդաթեան կղզի). իսկ հատով—«Օրան է Բուար» խանութում և «Գուտտենբերգ» գրավաճառանոցում։ Գինը—հատով՝ 1 ր. 20 կ., մեծաքանակ գնողներին զեղչ 20%.

(Տ.կ.) առ. 423. 25—13

ԿՆԱԲՈՒԺԱԿԱՆ ԵՒ ՎԻՐԱԲՈՒԺԱԿԱՆ

ՄԱՍՆԱՒՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ

Ռտիշչեվսկայա 13, տելեֆօն 4—21.

Ընդունելութիւն թէ կանացի և թէ ներքին, նոյնպէս և վիրաբուժութեան կարիք ունեցող մնայուն стаціонаръ) հիւանդների (բացի վարակիչ և հոգեկան հիւանդութիւններից), վաղօրօք գրվելու պայմանով։

Ընդունելութիւն կանացի, ներքին և մանկական խանգութիւն ունեցող երթեւեկ հիւանդների, ամեն օր՝ ցեր. ժամը 11-ից մինչև 12-ը։

Ընդունելութիւն պրոֆ. Մ. Ս. Սուբբոտինի կողմից վիրաբուժ. կարիք ունեցող հիւանդների, վաղօրօք գրվելու պայմանով, երկուշաբթի և հինգշաբթի օրերը ցեր. ժամը 1—2-ը։

Հիւանդանոցի բժիշկները

Ա. Ա. Յարութիւնեան, Ն. Ն. Վեսելովզորով, Վ. Ա. Զակրժեվսկի, Ի. Գ. Կալամկարեան, Ա. Ա. Նովիցկիյ, Գ. Ն. Տէր-Ներսէսեան, Ն. Զ. Ռամիկեան, Ա. Ր. Փիշէր, Ս. Պ. Շահպարոնեանց։ Կոնսուլտանտ՝ պրոֆեսօր Մ. Ս. Սուբբոտին։

(Տ.կ.) առ. 779. 100—69

ԲԺՇԿԱՊԵՏ

Մ. Ի. ՄՈՒՐԱԴԵԱՆ

Օգնական Prof. Posner-ի

Ընդունում է միզասեռական (վեներական) հիւանդներին Բեռլինի իր խորհրդակցական կաբինէտի և պրոֆ. Պօզնէրի կլինիկայի մէջ։ Տալիս է նաև խորհուրդներ միւս մասնագիտութիւնների վերաբերեալ։

Հասցէն՝ D-r Muradoff Berlin. Iohannisstr. 15 (an der Friedrichstrasse). Telefon amt Norden 113—19.

(Կ.) առ. 830. 0—30

ԲԺԻՇԿ

ՄԱԿԱՐԵԱՆՑԸ

Մայիսի 15-ից վերսկսեց հիւանդների ընդունելութիւնը

ՊԵԱՏԻԳՈՐՍԿՈՒՄ

Մասնագիտաբար—միզասեռական, վեներական, սիֆիլիս և կաշուի հիւանդութիւններ։

Հասցէն՝ Верхній Бульваръ, д. Зипаловой.

(Օ.Մ.) առ. 401. 20—19

ԲԺԻՇԿ

ՇՈՒՇԱՆԻԿ ՆԱԲԱԹԵԱՆ

Ընդունում է հիւանդներ կանանց և մանկաբարձութեան վերաբերեալ ամեն օր, բացի կիրակի օրերից, երեկ. ժամը 5—6-ը։

Հասցէն՝ Ռտիշչեվսկայա № 1.

առ. (Ե.Տ.Կ.) 4. 100—75

ԵՐԴՈՒԵԱԼ-ՀԱՒԱՏԱՐՄԱՏԱՐ

Տիգրան Յովհաննիսեանը

ՏԵՂԱՓՈԽՎԵՑ ԲԱԳՈՒ

Հասցէն՝ Баку, улица Гоголя 26. Присяжному повѣренному Тиграну Нерсесовичу Іоаннисянцу.

(7) առ. 538. 2—2

По умѣреннымъ цѣнамъ
Новѣйшихъ изящныхъ рисунковъ.
ПОЛНОМѢРНЫЕ
ОБОИ
ФАБР. СКЛАДЪ
МАНГИКІАНА
ПУШКИНСКАЯ № 7.

357. 50—19 (Տ.Կ.)

ԱԶԴԵՑՈՒԹԵԱՆ ՀԵՏԱՄՈՒՏ ՔԱՅԼԵՐ

Թիւրքիայից մեզ հաղորդած տեղեկութիւնները ցոյց են տալիս, որ գերմանական և ամերիկական միսիաները պէտք է շուտով ստանան նոր աջակցութիւններ և ընդարձակեն իրանց գործունէութիւնը։

Գերմանիան դիտաւորութիւն ունի բանալ մի քանի կրթական դպրոցներ, որոնց ուսման ծրագիրը համապատասխան լինի միջնակարգ և մինչև անգամ աւելի բարձր դպրոցների ծրագիրներին։ Այդպիսի դպրոցներ պէտք է հիմնվեն գաւառական մի քանի կենտրոններում և Կ. Պոլսում։

Ամերիկան վճռել է աւելի ոյժ տալ գաւառական դպրոցներին Փոքր-Ասիայի զանազան տեղերում։

Անկասկած՝ իւրաքանչիւր նոր կրթարանի հաստատվելը Թիւրքահայաստանում ունի իր կուլտուրական բարեմասնութիւնները և արժանի է ողջոյնի։ Բայց միևնոյն ժամանակ կարեւոր է, որ Թիւրքահայերը ընդունակ լինեն իրանց սեփական դպրոցները այնպէս բարեկարգելու, որ նրանք կարողանան կանգնած լինել եւրոպական դպրոցական գործի պահանջների մակերևոյթի վրա։

Թէև Կ. Պոլսի Միացեալ Ընկերութիւնը և Եգիպտոսի համրային հայկական Միութիւնը սկսել են կրթական գործունէութիւն Թիւրքահայաստանում, բացում են դպրոցներ, կազմակերպում են ուսուցչական խմբեր, հաստատում են ցուցադաշտեր և գիւղատնտեսական դասընթացքներ, բայց նրանք կարօտ են կողմնակի աջակցութեան, դրամական մեծ օժանդակութեան, որպէսզի հնարաւորութիւն ունենան դպրոցական աւելի խիտ և ընդարձակ ցանց կազմելու և տեղական կրթական պահանջները լցուցանելու։

Եւրոպական պետութիւններից կրթական-դպրոցական գործունէութիւն չունի Փոքր-Ասիայում Ռուսաստանը, որը շատ քիչ հոգատարութիւն է ունեցել դպրոցներ, արհեստանոցներ, բուժարաններ և ուրիշ ապաստարաններ հիմնելու Թիւրքահայաստանում։ Ռուսաստանը բաւականացել է իր հըպատակների համար մի որոշ աստիճան հովանաւորութիւն հաստատելով և վերջին տարիներում տնտեսական մի քանի խնդիրների առաջ մղելով։

Այժմ, երբ Թիւրքահայաստանը դառնում է կռուածաղիկ պետութիւնների միջև և քաղաքական-կուլտուրական մրցութեան ասպարէզ, իւրաքանչիւր պետութիւն աշխատելու է ուժեղացնել իր ազդեցութեան աստիճանը, որպէսզի թէ համակրութիւն գրաւի տեղական ազգաբնակութեան կողմից և թէ հող պատրաստի իր տնտեսական, իսկ ապագայում գուցէ և քաղաքական շահերի համար։

Անշուշտ՝ կուլտուրական գործողների համար բացվում է գործունէութեան հրապարակ։ Եւ հայ կուլտուրական մարդու վրա կրկնակի պարտաւորութիւն է ծանրանում գիտակցօրէն վերաբերվել կատարվող փոփոխութիւններին և պատրաստվել արժանաւոր մշակ լինելու իր երկրում, որը վաղուց սպասում է քաղաքակրթական գործունէութեան։

Ռոպէն կարեւոր է և գործունէութեան պահանջը բացայայտ է և զօրաւոր։

Ա. Քալանթար

ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԸ

ԼՈՒՐԵՐ ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԻ ՄԱՍԻՆ

Օսմ. կառավարութեան պատրաստած բարենորոգմանց ծրագրում ի միջի այլոց կայ մի կէտ, որ տրամադրում է Հայաստանի հարիւր գաւառակներում դատական նոր կազմակերպութիւնների ձեռնարկել և դատարաններ հաստատել։

Կ. Պոլսում յունիսի 21-ին կայացել է Թիւրքահայոց ազգ. ժողովի նիստը, որը գլխաւորապէս զբաղվել է Թիւրքահայերի՝ իրանց բնագաւառից արտագաղթելու դէմ միջոցներ գտնելու հարցով։

Այդ նիստի ամփոփ նկարագիրը կը տանք «Մշակի» յաջորդ համարում։

Այս օրերս սուլթանը առանձին իրադէով արտօնել է թիւրքական մինիստրութեան կազմած բարենորոգումների ծրագրի գործադրութիւնը։ Այդ իրադէով՝ յանձնարարվում է հէնց անմիջապէս գործադրել բարենորոգումները կեանքի մէջ՝ առանց սպասելու, որ պարլամենտը գումարվի և ընդունէ այդ օրինագծի գործադրումը։ Բարենորոգումների ըստ այդ ծրագրի օսմ. պետութիւնը բաժանվելու է մի շարք շրջանակների, որոնցից իւրաքանչիւրի համար հրաւիրվելու է մի ընդ. քննիչ 5 տարի ժամանակով և մինիստրների խորհրդի որոշումով։ Ընդհ. քննիչների տրամադրութեան տակ դրվելու են նոյն կոմիսարների հաւանութեամբ կամ ընտրութեամբ, տեղացի և օտար մասնագէտներ։

ՄԵԾԱՒՈՐ ԱՐԵՒԵԼՔԻ ԴԵՊՔԵՐԸ

(ԼՐԱԲԵՐԻ ՄԸ ՑՈՒՑԱԿՆԵՐԸ)

—o—

ՀԱՅԿԱԿԱՆ ԽՆԴԻՐ

I

Կ. Պոլիս, 26 յունիս

Հայաստանի բարենորոգմանց խնդիրը նոր շրջանի մը մէջ մտած է։

Բարենորոգմանց պէտքը ասկէ առաջ օսմ. կառավարութիւնը կ'ընդունէր, սակայն զանոնք չէր գործադրեր, զանազան պատճառաբանութիւններով։

Դարձեալ դիտելի է, որ օսմ. կառավարութիւնը մինչև վերջերս ընդհանուր բարենորոգմանց պէտքին վրայ կը ծանրանար և միշտ կը մերժէր Հայաստանի համար մասնաւոր բարենորոգումներ գործադրելու առաջարկները, երբ պետութեան վճռական և անջատողական ձգտումներու արդիւնք։ Հիմա կառավարութիւնը իր հայեացքը փոխած է և Հայաստանի համար մասնաւոր բարենորոգումներ գործադրելու սկզբունքն ալ ընդունած է։

Դարձեալ դիտելի է, որ ասկէ առաջ կառավարական օրգանները միշտ բարենորոգումներ գործադրելու համար ժամանակի, դրամի և խաղաղութեան պէտքերը մատնանիշ կընէին և հայոց անհամբերութիւնը կը դատապարտէին, այս կերպով յաւիտենապէս ձգձգելով բարենորոգմանց հարցը, քանի որ դրամ և խաղաղութիւն օսմ. կառավարութեան համար երկու անգտանելի բաներ էին։ Տակաւին մէկ-երկու շաբաթ առաջ անշուշտ կը յիշուի, թէ Ահմէդ Աղայեվ ինչպիսի ծանր յարձակում մը ըրած է հայոց վրայ, բարենորոգմանց անմիջական գործադրութեան համար ձայն բարձրացուցած ըլլալնուն համար։

Հիմա մի քանի օր է ի վեր երեւոյթները փոխուած են։ Յատուկ հրահանգի մը վրայ, կարծես թէ, բովանդակ վարձուած մամուլը,—ըլլայ մինիստրներու հետ էնթէրվիւներու ձևին տակ, ըլլայ առաջնորդողներու միջոցաւ—կը յայտարարէ թէ հայաբնակ նահանգներու բարենորոգմանց սկսուած է։

Եւ կը թուեն սա տեսակ բարենորոգումներ։

1) Պաշտօնեաները աւելի գործունեայ և աւել եռանդուն դարձած են (!!!)։

2) Ժանդարմըրիի քննչութիւն մը հաստատուած է։

3) Ժանդարմըրին զգալապէս աւելցուած է։

4) Հակառակ արտաքին դրդումներու, յանցապարտներն ու ոճրագործները խստիւ հետապնդուած և զսպուած են։

5) Հաշտարար դատաւորներու օրէնքները հրատարակուած և գործադրութեան տըրուած են։

6) Դատական կազմակերպութեան ձեռնարկուած է 50-ի չափ գաւառակներու մէջ։

Մարդ կը զարմանայ, թէ «Թանին» և իր համախոհ մամուլը դեռ ինչպէս չէ երկարաձգած այս բարենորոգմանց շարքը, որ կրնայ անսահման դառնալ, քանի որ Թուրքի վրայ կատարուած բարենորոգմանց շուրջը կը յածի խնդիրը։

Սակայն և այնպէս Թիւրք մամուլը այս կերպով զարմանալի հակասութեան մը մէջ կը գլորուի, վասնզի եթէ բարենորոգումներ գործադրուած են երկրին մէջ վերջին կարճ միջոցին մէջ, ըսել է թէ՝ ասկէ առաջ բարենորոգումներու գործադրութեան համար ցոյց տրուած արգելքները—պատերազմ, դրամի պակաս և այլն—սուտ էին և լոկ պատրուակ։ Վասնզի օսմ. կառավարութիւնը ոչ ասկէ աւելի վրդովուած և խաղաղութենէ զուրկ շրջան ունեցած է և ոչ ալ ասկէ աւելի տնտեսական անձկութեան մատնուած է։

Երբ այս նեղ դրութեան մէջ բարենորոգում գործադրել կարելի էր, ասկէ առաջ ալ աւելի մեծ կարելիութիւն ու միջոց կար այդ բարենորոգումները ծրագրելու և գործադրելու։

Սակայն այն ատեն, ինչպէս նաև հիմա միշտ կամքն է, որ պակսած է օսմ. կառավարութեան, և ինչպէս այն ատեն կը ստէին բարենորոգմանց անկեղծ փափագ ցոյց տալով, հիմա ալ կը ստեն բարենորոգումներ գործադրուած ցոյց տալով, երկուքն ալ քաղաքական հաշիւներով։

Հայորդի

ԱՐՁԱԳԱՆՔՆԵՐ ՎԱՍՊՈՒՐԱԿԱՆԻՑ

—

Վան, 26 յունիսի

Աւազակ Մահմէի սպանութիւնը, որը նախորդ թղթակցութեամբս ծանուցել էի, վերջնականապէս ստուգվեց. սպանվել է նաև նրա որդին՝ ստացած վէրքերից։ Դէպքը պատահել է այս կերպով։ Ուրանց գիւղացի մի հայ երիտասարդ սպանում է Խօրօրս գիւղացի Ահմէդ աղայի որդուն այն պատճառով, որ սա մի քանի տարի առաջ սպանել էր երիտասարդի հօրը։ Այս վրէժխնդրական ակտը գրգռում է խօրօրսցիներին, որոնց գիւղը Խիզանի գաւառում 400 տնից բաղկացած մի մեծ քիւրդաբնակ գիւղ է, որոնք յարձակվում են Ուրանց գիւղի վրա՝ սպանող անձը երեան հանելու նպատակով. հայերը դիմադրում են մինչև կառավարութեան զօրքերի հասնելը, որոնք նախ աղաչարում են քիւրդերին—որոնց միացել էր նաև Մահմէն իր աւազակախմբով—յետ քաշվել. բայց, հանդիպելով մերժումի, կրակ են բացում պաշարող քիւրդերի դէմ և սպանում են աւազակներին և ուրիշ երեք քիւրդերի։ Սպանվում են դարձեալ երկու հոգի էլ հայերից, մէկը՝ արտը ջրելիս և միւսն էլ գիւղում։ Այս վերջինի համար «Վան-Տոսպ» թերթում գրվեց, որ սպանվել է զինուորների կրակից. բայց կառավարութիւնը հերքեց և թերթի դէմ դատ սկսեց։

Նոյն թերթի դէմ մի ուրիշ դատ էլ բաց են արել քիւրդերին ընդհանուր կերպով աւազակ, գող ու մարդասպան անուանելու պատճառով, այդ գրուածքը համարելով որպէս ժողովուրդների համերաշխութեան հակառակ մի գրութիւն։ Նոյնպէս երկու դատեր էլ բաց են արվել «Աշխատանք» թերթի դէմ, կառավարական մի պաշտօնեայի կաշառակեր անուանելուն իսկ մի ուրիշին տգեղ ածականներով որակած լինելու համար։ Մամուլի ազատութիւնը թոյլ չէ տալիս անզգոյշ ու վիրաւորող բառեր գործածել, ինչ որ մեր գրողներից շատերին դեռ նոր է յայտնի լինում։

Նախորդ նամակումս մամխոանցիների դէմ կատարված պատժական ակտը նկարագրելիս՝ մի քանի անճշգութիւններ են առաջ եկել, հարկաւոր մանրամասնութիւններ դեռ առնված չը լինելու պատճառով։ Մամխոանցիներից սպանվել են ոչ թէ 20—25 քիւրդեր, ինչպէս հաղորդել էի նոյն նամակումս՝ հասած առաջին լուրերի համաձայն, այլ սպանվել են 5-ը և վիրաւորվել 2-ը, իսկ գրաւված ոչխարներն էլ 2500 են, որոնք քաղաքս բերվեցին և 1500-ը հայերին տրվելով իրանց յափշտակված անասունների փոխարէն, մնացեալը ծախվեց յօգուտ կառավարական տուրքերի։ Ձերբակալվել են նաև 20—25 հոգի նոյն ցեղի քիւրդերից, իսկ ցեղապետներից երկուսը արդէն կառավարութեան տուած պատժից առաջ քաղաքս բերվել ու բանտարկվել են։ Յուսով ենք, որ ինչպէս խօրօրսցիների ու Մահմէի, նաև մամխոանցիներին տրված այս խիստ պատիժները մի լաւ դաս կը լինեն աւազակաբարոյ ցեղերին և կը զսպեն նրանց աւարառութեան ու թալանի ախորժակները։ Այս ակտը ապացոյց է նաև այն բանի, որ կառավարութիւնը, եթէ ուզէ, լիովին կարող է պատժել ու զսպել չարագործներին. գոհ ենք, որ այդ փաստը առաջին անգամ տուեց մեր նոր վալի՝ Թահսին-բէյը։

Առ այժմ իբրև փորձանք երկրի խաղաղութեան դէմ՝ մնում են Միր-Մհէն և Շաքիրը. բայց Նորդուզ գաւառում նոր կայմակամութիւն հաստատվելը և 500-ի մօտ զինուորների նոյն կազայում բնակութիւնը և կառավարութեան կողմից ցոյց տրված ազդուութիւնը պիտի նրանց էլ անշուշտ պարտաւորեցնեն կօրեկտ սահմանում մնալ ու երկիրը խռովելու նոր փորձեր չանել։

Պարսկաստանում բնակվող ավդօցի ցեղի քիւրդերից մի հարիւր տան չափ՝ գժտված լինելով իրանց ցեղապետ Իսմայիլ խանի հետ (յայտնի Սմկօն)՝ գաղթել են Վանի վիլայէթը ու բնակութեան տեղ խնդրել կառավարութիւնից, իսկ սա կարգադրել է, որ նրանց բնակութեան տեղ տրվի եզիդիների գիւղերում։ Ավդօցիները մինչև այժմ ճանաչվել են որպէս անհանգիստ ու աւազակաբարոյ քիւրդ ցեղերից մէկը, ուստի կառավարութեան այս կարգադրութիւնը բողոքի տեղիք է տուել ոչ միայն եզիդիների շրջանակում, այլ նաև հայերի, որոնք ասում են. «Միթէ երկրում քիչ կային անխաղաղ տարրեր, որ մի ուրիշն էլ է հրաւիրվում և նրանց տեղ է տրվում մի ժողովրդի մէջ, որը մինչև այժմ երկրի խաղաղ ու աշխատասէր տարրերից մէկն է ճանաչված»։

Մարակ

ԱՒՍՏՐԻԱԿԱՆ ՆԱՄԱԿՆԵՐ

—

Հայկական հարցը

Վիէննա, 11 յուլիս

Գերմանացի քաղաքագէտ մը իր ներկուս տեսութիւններէն մին կը վերջացնէր յետագայ բառերով. «Ոեէ ազգի մը տկար և անզօր լինելն է կարծես անոր միակ յանցանքը, միակ մեղքը»։ Ահա մի ճշմարտութիւն, որ անվիճելիօրէն ճիշդ է, որ անգամ մը եւս կապացուցանէ զօրաւորին դերն ու դիրքը, ոյժին ազդեցութիւնն ու կշիռը։

Ու, արդարև, ազգերու թատերաբեմին վրայ՝ ոչ միայն տեղերական ուշադրութիւն կը գրաւեն այն համայնքները, որ լեզալ պահանջներ ունին, այլ և դիւանագիտութիւնը կը փութայ անպայման գոհացնել այդ համայնքներու պահանջը՝ երբ այդ համայնքները ճակատագրականապէս ունին զէնքով լսելի ընելու պատկառանքը։

1878 թուականի Բեռլինի դեսպանախորհուրդը նկատողութեան առաւ յոյն եպիսկոպոսի մը աղերսագիրը, որուն մէջ յիշեալ կրօնականը կը խնդրէր լուծման յանգեցնել յունաց պատրիարքարանի կալուածական պահանջները՝ ռումինական պետութենէն։

Նոյն այդ դեսպանախորհուրդը գրեթէ պաղ վերաբերմունք ցոյց տուաւ Թիւրքահայոց դժբաղդ հարցին։ Լոյս աշխարհ եկաւ 61-րդ յօդուածը, զուրկ՝ գործադրելի ըլլալու համար անհրաժեշտ եղող դիւանագիտական աջակցութենէ։

Մենք նոյն վիճակը կը տեսնենք այսօր ալ։

Աւստրո-հունգարական դիւանագիտութիւնը համակրանք, աջակցութիւն, դրամ կը շռայլէ լեռնական մի ալբանական ժողովուրդի այն պարզ պատճառով, որ սարերու անմատոյց խորշերու մէջ ապաստանած այս վայրենի ցեղը զօրաւոր է ու վաղ կամ անագան կարող՝ օգնելու Վիէննայի դիւանագիտութեան ապագայ ծրագիրներուն։

Այսօր ամբողջ աշխարհի ծանօթ է, թէ Փոքր-Ասիոյ մէջ կապրի խաղաղ, գործունեայ, մտացի ժողովուրդ մը. հայ ժողովուրդն է դա, իր համեստ պահանջներով դուրս եկած, որ քառորդ դարէ ի վեր բողոքի աղեխարշ աղաղակ բարձրացուցած է Թիւրք վատթար իշխանութեան դէմ, քիւրդերու անզուսպ ասպատակութեանց դէմ։ Արդեօք այն դիւանագիտութիւնը, որ պայծառօրէն ծանօթ է հայկական ցաւերուն, ինչու համար ազդեցիկ քայլեր չառներ որեւէ պարագայի տակ՝ հզօր ձեռքով մը լուծելու համար հայկական խնդիրը՝ հայոց բաւարարութիւն տալու ձգտող կարգադրութեամբ։ Մի՞թէ անոր համար, որ ամէն պետութիւն միշտ անհատական շահեր հետապնդած է Թիւրքահայաստանի մէջ. ո՛չ. այլ անոր համար մանաւանդ, որ, հայ ժողովուրդը՝ իր տիեզերածաւալ, փոքրաթիւ, քաղաքականապէս տհաս հանգամանքներով անզօր է ուղղակի շահագրգռելու կանաչ սեղանի ակնոցաւորները։

Ահա այսօր, երբ աւելի նուազ քան մէկ տարուայ ժամանակամիջոցի մէջ ազատագրուած են փոքրիկ ժողովուրդներ, դեռ անխնայօրէն կը տառապի հայ փոքրիկ ժողովուրդը, ամէն օր նորանոր սպանութեանց գոյժեր կը հասնին, թիւրք իշխանութիւնք անտարբեր կը դիտեն, եւրոպական կաբինէտները սառնօրէն կը հետեւին այդ բոլոր ցաւագին անցուդարձին, բայց հայկական հարցը հո՛ն է՝ ուր կը մնար։

«Կասիլն է երթալ ետ-ետ»,—կըսէ բանաստեղծը։

Մենք հոս չպիտի քննենք Եւրոպայի անտարբերութեան բոլոր պատճառները, բոլոր շարժառիթները։ Այսօր կուզենք ներկայացնել «Մշակի» յարգելի ընթերցողներուն՝ քանի մը օգտակար քայլեր, զորս Վիէննայում կազմուած հայկական կոմիտէն ձեռք առած է վերջերս՝ Աւստրո-Հունգարիայի համակրանքը հրաւիրելու համար Թիւրքահայոց վրայ։

Իրաւ է, Աւստրիան չունի մասնաւոր պատճառներ՝ հետաքրքրուելու հայ ժողովուրդի դրութեամբը. այնուամենայնիւ, իբր վեց մեծ պետութեանց մին, և մանաւանդ՝ պատկանելով երրեակ դաշնակցութեան՝ իբր Գերմանիայի մտերիմ գործակից, գուցէ կարող է, ռէֆօրմներու ստիպողական հարցին մէջ, ունէ ազդեցութիւն յառաջ բերել։

Հայկական կոմիտէն, որ կազմուած է այստեղ գրեթէ երեք ամսէ ի վեր, առաջնորդուած է գլխաւորաբար այն համոզումով, որ հայ հասարակութեան դատը պաշտպանելու լաւագոյն միջոցներէն մէկն է՝ նախ և առաջ այդ ժողովուրդի կուլտուրական արժէքը պարզել լայն խաւերու առաջ։ Արշակ Չօպանեան, որ 16 տարիէ ի վեր այս ուղղութեամբ գործեց Ֆրանսայի մէջ, կրցաւ օգտակար ըլլալ հայութիւնը ծանօթացնելով Ֆրանսացոց։

Ահա Վիէննայի կոմիտէն ալ այս մտօք սկսած է գործել այժմ, և բազմաթիւ աւստրիացի պետական մարդիկ, ինտելիգենտ ներկայացուցիչներ և գրագէտներ արդէն որոշած են զանազան առաջարկներու պատասխանելով՝ բանախօսել հայկական հարցի վրայ։ Ի հարկէ, այս գիտուններու արտասանած ճառերը պիտի ունենան բաւական ազդեցութիւն, և, անմիջապէս որ կարդացուին դասախօսութիւններ, անոնց մասին ստոյգ մանրամասնութիւններ պիտի տամ «Մշակի» ընթերցողներուն։ Արդէն ուրախալի պարագայ է, որ վիէննական մամուլի կարեւոր օրգան «Րայխսպօստ» միշտ համակրական շեշտով լեցուն յօդուածներ կը նուիրէ հայոց։ Երբ մարդ մտածէ, թէ այստեղ եղած են հրէայ ժուրնալիստներ, ինչպէս Նէվլինսկի, որ Աբդուլ Համիդի կողմէ կաշառք կը ստանար միշտ՝ հայոց դէմ գրելու համար, ուրախալի է ամէն կերպիւ «Րայխսպօստի» և նմաններուն հայանպաստ հրատարակութիւնները և անոնց՝ հանրային կարծիքի վրայ ըրած ներգործութիւնը տեսնել։

Զ. Սուրէնեան

ՊԵՏԱԿԱՆ ԴՈՒՄԱ

—o—

ՀԱՅՈՑ ՀԱՐՑԻ ՔՆՆՈՒԹԻՒՆԸ*)

(Նիստը շարունակվում է Վոլկոնսկիի նախագահութեամբ)

—

Ստենոգրաֆիական հաշիւ յունիսի 6-ի նիստի

Պապաջանեանի ճառի վերջը

(Բագուի, Գանձակի և Երևանեան նահանգների պատգամաւոր)

1895 և 1896 թուականների կոտորածների ժամանակ սպանվեցին 88,243 քրիստոնեայ և 1293 մուսուլման, կողոպտված ու քանդված են 2493 գիւղ, կործանված 568 եկեղեցի և 77 վանք։ Ես այլևս նոյն ուղղութեամբ թւանշաններ չեմ բերի, որովհետև սրանք էլ բաւական են։ Եւ այդ անցքերից յետոյ, սակայն, Ռուսաստանը չը վերադարձաւ իր նախկին տրադիցիոն քաղաքականութեան, և հայերը առաջվայ պէս բաղդի կամայականութեանը թողնվեցին։ Այնուհետև հասաւ 1908 թ., երբ Թիւրքիայում սահմանադրութիւն յայտարարվեց և երբ երիտասարդ-թիւրքերի կուսակցութիւնը ձեռք է մեկնում Դաշնակցութիւն կուսակցութեան, որն ընդունում է այդ առաջարկութիւնը և դաշնակցում։ Բայց որպէս պատասխան այդ առաջարկութեան սկսվեց մի այլ կոտորած Ադանայում, ուր սպանվեցին մօտ 15,000 հոգի։ Այդ պատասխանն էր հաշտվելու ցանկութեան, նոր կառավարութեան ոտներն ընկնելու ցանկութեան։ Բայց, այնուամենայնիւ, հաշտվելով և այս փաստի հետ, Դաշնակցութիւն կուսակցութիւնը շարունակում է պահպանել դաշնակցութիւնը թիւրքական կայսրութեան ներկայացուցիչների հետ։ 1911 թ. միայն, վերջապէս, համոզվում է նա վերջնականապէս, ինչպէս որ համոզվում է նոյնպէս ամբողջ հասարակութիւնը, թէ Թիւրքաց կառավարութիւնից ռէֆօրմների կամ դրութեան բարւոքումն սպասել անհնար է, թէ նոր կառավարութիւնը շարունակում է հնի քաղաքականութիւնը։ Նկարագրելով այդ դրութիւնը Հայաստանում վերջին ժամանակներս, հայ ժողովրդի ներկայացուցիչները, Կ. Պոլսի ազգային ժողովն ու պատրիարքը, ներկայացրին սուլթանին երկու մեմօրանդում, որոնց մէջ ցոյց է տրված հայերի անելանելի կացութիւնն ու հայերին օրէնքից դուրս յայտարարելը և թէ միակ նպատակն է տեղական չինովնիկների, որոնք տեսնում են նրանց մէջ թշնամական տարր,—ֆիզիքապէս ջնջել այդ էլէմէնտը։ Ի՞նչ պէտք էր անել այժմ, ի նկատի ունենալով այնքան ծանր կացութիւնը, որը ստեղծվեց հայերի համար Թիւրքահայաստանում։ Նախ և առաջ կը հարցնեն մեզ, թէ ի՞նչ ենք մենք կամենում։ Այդ առիթով ես պէտք է յիշատակեմ, թէ մեր ցանկութիւնները շատ համեստ են։ Հակառակ այն կարծիքին, որն այստեղ յայտնվեց, այն ակնարկին, որը թոյլ տուեց իրան անել Պետ. Դումայի անդամ Չխենկելին, թէ հարցերը պէտք է որոշվեն իրանց տեղերում Թիւրքիայի հպատակութեան մէջ, ես պէտք ասեմ, որ ոչ ոք էլ չի մտածում պառակտվելու մասին և չի էլ մտածում որևէ ինքնուրոյնութեան մասին։ Հայերի պահանջները վերին աստիճանի համեստ են։ Նրանք ցանկանում են միայն այնպիսի կարգ ու կանոն հաստատել, որը երաշխաւորէր նրանց իրանց դաւանանքի ազատութիւնը, պաշտպանէր յարձակումներից նրանց պատիւը, կեանքը, գոյքը և ապահովէր նրանց ազգային կուլտուրայի զարգացումը։ Ահա թէ ինչի շուրջն են պտտում բոլոր ձգտումները, և այդպիսով հպատակութիւնը փոխելու համար, որի մասին խօսեց պ. Չխենկելին, խօսք չը կայ։ Հայերի այժմ արտայայտած ցանկութիւնները գլխաւորապէս հիմնվում են այն մեմօրանդումի վրա, որ ներկայացրին եւրոպական պետութիւնները, իսկ դրանց թւում էլ Ռուսաստանը, 1895 թ. մայիսին Թիւրքաց կառավարութեան։ Այդ պահանջներն իրանց վերջնական եզրակացութեամբ յանգում են այն բանին, որ բոլոր վիլայէթներն առաջվայ պէս մի էլայէթի վերածվեն, որ վեց վիլայէթների կազմից դուրս գցվեն բոլոր այն մասերը, որոնք արուեստականօրէն են միացված, որ վերջ տրվի համիդիէ հեծելազօրին։ Եւ այդ վերջին պահանջը լիովին ընդունելի կը լինէր նաև Թիւրքիայի համար, որովհետև երիտասարդ-թիւրքերը 1908—9 թւականներին ոչնչացրին այդ զօրքը։ Ապա, որ հայերին վերադարձվէին նրանց հողերը, և որ էլայէթի գլուխը կարգվէր եւրոպացի ինսպեկտոր կամ գեն.-նահանգապետ, կամ ինստրուկտոր, ինչպէս կուզէք նրան անուանեցէք, որպէսզի այդ ինսպեկտորը ունենար իր մօտ մի խորհուրդ հաւասար թւով մուսուլմաններից և քրիստոնեաներից։ Այդ պահանջը բոլորովին արդար է թւում, եթէ յիշենք, թէ նոր վարչական սահմաններ գծելիս կը լինի նաև հայերի համապատասխան թիւ, իսկ այնուհետև այդ պահանջը համապատասխանում է Թիւրքական գոյութիւն ունեցող օրէնքին։ Թիւրքական իշխանութիւններն և թիւրքական մամուլն ընդհանրապէս համամիտ են այդ բարենորոգումների հետ. մանրամասնութիւններ չեմ բերի, որպէսզի երկար չը պահեմ Պետական Դուման, բայց կասեմ, որ նրանք համամիտ չեն այն բանում, ինչում որ պէտք է հակառակ լինի Թիւրքական կառավարութեան, իմ կարծիքով, նաև ռուսաց կառավարութիւնը։ Նրանք համակարծիք չեն, որ, ինչպէս մենք ենք մտածում, անհրաժեշտ է ռէֆօրմներ մուծելը եւրոպական պետութիւնների կոնտրոլին ենթարկել։ Մենք հրաշալի կերպով գիտենք, որ մեր ցանկութիւններն այդ ուղղութեամբ նշանակութիւն ունենալ չեն կարող, որ այդ հարցը, դժբաղդաբար, չի կարող լուծվել Նեվայի ափերում։ Պաշտպանվում է ընդհանուր ֆորմուլան պետութիւնների կոնտրոլի մասին։ Դեռ 1895 թ. նա հաստատված է, բայց ոչ մի հետևանք չը կայ, ուստի ռուսահայերի ցանկութիւնն է, որ ռէֆօրմներ մտցնելու գործը իր վրա վերցնէր Ռուսաստանը, որ աւելի մօտից է ճանաչում տեղական ազգաբնակութիւնը, որը 100 տարի է արդէն կառավարում է մի երկիր, ուր ապրում են միևնոյն տարրերը, ինչ որ Թիւրքահայաստանում։ Դէպի Ռուսաստանն են դարձած այժմ մեր բոլոր հայեացքները, նրանից են սպասում այդ խնդրի լուծումը։ Որքան մեզ, կովկասահայերիս, յայտնի է, մեր կառավարութիւնը յայտարարել էր, թէ չի թողնի անկարգութիւններ Թիւրքահայաստանում. ազգաբնակութիւնն ամեն կերպ ողջունում է ռուսաց կառավարութեան այդ յայտարարութիւնը։ Մենք սպասում ենք կառավարութեան յետագայ քայլերին. միայն ռուս կառավարութեան միջամտութեան ուղիով ռէֆօրմներ ստեղծելու և մտցնելու գործում այդ բարենորոգութիւնները կարող են լուրջ նշանակութիւններ ստանալ։ Եւ այսպէս, պարոնայք, վերջացնելով իմ բացատրութիւնները, ես ասում եմ, թէ ռուսահայկական ամբողջ ազգաբնակութեան ցանկութիւնը կայանում է նրանում, որ ռէֆօրմները իրականացնելու գործը իր վրա վերցնէր Ռուսաստանը։ (Ծափ. ձախից, կենտրոնում և աջակողմեան առանձին նստարանների վրա)։

ԲԱԼԿԱՆԵԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԸ

ԲԱԼԿԱՆԵԱՆ ԴԺՏՈՒԹԻՒՆՆԵՐ

—

(Պետերբուրգի Հեռ. Գործ.)

5 յուլիսի

Լոնդոն.—Համայնքների պալատ։ Աւտոնոմ Մակեդոնիա ստեղծելու հարցի հաւանականութեան առիթով Գրէյը ասաց, որ այդպիսի մի առաջարկ ներկայ պայմաններում, որքան կարելի է դատել, աջակցութիւն չի գտնի և դժուարութիւնների լուծումն չէր լինի։ Գրէյը անկարելի է համարում, որ Անգլիան, որը անմիջական կերպով շահագրգռված պետութիւն չէ հանդիսանում, հանդէս գար աւելի մանրամասն բացատրութիւններով այդ հարցի մասին։

—

Սօֆիա.—Կաբինէտը կազմված է արդէն։ Նախագահն է Ռադօսլավօվ։ Արտաքին գործերի մինիստրութեան պորտֆէլը ստանում է Գենադիէվը։

—

Լոնդոն.—Րէյտերի ասելով, Ռումինիան պետութիւններին ներկայացրել է յայտագիր, մատնանշելով որ նա նուաճողական քաղաքականութեան չէ հետամտում, որովհետև կարելի չէ համարում օգուտ քաղել բօլգարական զօրքի արդի նեղ վիճակից. Ռումինիայի գործողութիւնների դրդապատճառն է Դունայի միւս ափում ապահով սահման ձեռք բերելու անհրաժեշտութիւնը։ Բալկանեան պետութիւնների մէջ ծագած ներկայ կոնֆլիկտը, որ առաջացել է Բօլգարիայի անհաշտութիւնից, հաստատում է Ռումինիայի համոզմունքը, որ Բօլգարիայի հետ հաշտ յարաբերութիւններ պահպանելու համար անհրաժեշտ է ռազմական սահման, որպիսին հանդիսանում է Տուրտուկայ-Դոբրիչ-Բալչիկ գիծը։ Էական շահերը չեն թոյլ տալիս Ռումինիային խաղաղ հանդիսատես լինել բուլգարական ձգտումներին հեգեմօնիայի հասնելու։ Ռումինիան պէտք է մասնակցէ այն հարցերի լուծմանը, որոնք սպառնում էին նրան երկար ժամանակից ի վեր և խախտեցին ընդհանուր խաղաղութիւնը. այդպէս վարվելով, Ռումինիան պաշտպանում է պետութիւնների խաղաղասիրական ջանքերը։

Րէյտերի ստացած տեղեկութիւնների համաձայն, այդպիսի պահանջներով ռումինական ներկայացուցիչը դիմել է Դանէվին լօնդօնեան բանակցութիւնների ժամանակ և մտցված են յունվարին ստորագրված արձանագրութեան մէջ։

—

Բուխարէստ.—Թագաւորը հեռագիր ստացաւ Ֆերդինանդ թագաւորից, որով նա խնդրում էր նպաստել շուտով հաշտութիւն կայացնելու։ Միևնոյն բովանդակութեամբ մի նամակ էլ ստացել է թագուհին Էլէօնօրա թագուհուց։ Արքայազն Ֆերդինանդը ասել է իրան ներկայացող բուլգարական պատուիրակութեանը, որ ռումինական զօրաբանակը թշնամաբար չէ տրամադրված դէպի բուլգարական ազգաբնակութիւնը։ Այդ յայտարարութիւնը հանգստացրել է ազգաբնակութեանը։

—

Բելգրադ.—Բօլգարական տեղեկութիւնների դէմ իբրև հերքումն «Պրէսս-Բիւրօն» յայտնում է, որ ամբողջ ֆրօնտի վրա՝ սկսած Ժուբիկամիկից, Կիւստենդիլին մօտիկ, մինչև Դրամա և Կավալլա բօլգարները սերբերի գրոհից ոչ միայն քաշվել են մակեդոնական այն շրջանի սահմանները, որը իրան էր վերապահում Բօլգարիան, այլ և բոլորովին ջարդվել են։ Սերբերից հալածվելով, բօլգարները փախչում են Ջումայի վրայով, ձգելով իրանց զէնքերը։

—

Բելգրադ.—«Պրէսս-Բիւրօն» հաղորդում է. «Սերբիական մի զօրամաս խուժելով բօլգարական սահմանների ներսը, գրաւեց Իգվոր քաղաքը, բայց յետ մղվեց դէպի Վասիլեգրադ։ Բօլգարական բոլոր զօրքերը կենտրոնացված են սերբիական ձախակողմեան զօրամասի դէմ։ Այդ զօրամասի ճակատը՝ Մետոխիա և Լեչէվցի գիւղերի ուղղութեամբ գտնվում է նոյնպէս բօլգարական մի ուրիշ զօրամաս։ Կռիւը սկսվեց առաւօտից և տևեց ամբողջ օրը։ Սերբերը կռիւ էին մղում երեք ուղղութեամբ։ Երեկոյեան ժամը 5-ին օգնութիւն ստանալով, սերբերը ցրեցին թշնամուն»։

—

Բելգրադ.—«Պրէսս-Բիւրօն» հաղորդում է. «Դրութիւնը պատերազմաբեմում հետևեալն է. բօլգարները երկու զօրաբանակ ուղարկեցին Կնեաժէվաց-Զէյչար-Պիրոտ-Նիշ գծով Սերբիայի սահմանները խուժելու նպատակով. առաջին զօրաբանակը, 50 բատալիոնից բաղկացած և 120 թնդանօթով, գործում էր գեներալ Կուտինչէվի հրամանատարութեամբ, երկրորդը՝ 56 բատալիոնից և 120 թնդանօթով, գեներալ Պետրօվի հրամանատարութեամբ։ Սկզբում բօլգարների ծրագիրը իրագործվում էր աջող, որովհետև սերբիական բոլոր ոյժերը զբաղված էին Բրէգալնիցի մօտ սկսված կռւով։ Կարճատև աջողութիւնից յետոյ բօլգարները ընդհանուր պարտութիւն կրեցին և դուրս մղվեցին սերբիական սահմաններից։ Շտապ նահանջելիս բօլգարները քանդեցին երկաթուղային կամուրջը Սուկօվօյի մօտիկ։ Բօլգարները փորձ արին ամրանալու Օրլագլաւում, բայց թնդանօթային գնդակը հարկադրեց նրանց նահանջել աւելի [illegible]։ Սերբերը բազմաթիւ բօլգար գերիներ վերցրին սերբիական զինուորական համազգեստով։ Սերբիական զօրաբանակը խուժեց Բօլգարիայի սահմանները մօտ 20 կիլօմետր տարածութեամբ, ջարդեց բօլգարներին Բօսիլէգրադի մօտ, լեռնային կիրճով անցաւ Կիւստէնդիլ և այնտեղ ամրացաւ։ Սերբիական զօրաբանակը գրաւել է Պրագօվէտսի Չրբաժան ամբողջ տափարակը։ Բօլգարական զօրքերը նահանջեցին Էգրիպալանկայից։ Սերբերը աջողութեամբ մօտենում են Բրէգալնիցի ակունքներին։ Դէպի Ցարէվօ-Սէլօ գնալիս սերբերը գրաւել են Տրուժնիկամէնը։ Ընդհանուր առմամբ բօլգարական զօրքի դրութիւնը հետևեալն է. նեղվելով հարաւից՝ Բրէգալնիցի մօտից և արևմուտքից, բօլգարական զօրաբանակը կենտրոնանում է և ամրանում Կիւստենդիլի և Դուբնիցայի միջև եղած նեղ տարածութեան վրա»։

Բելգրադ.—Պետար թագաւորի նախագահութեամբ տեղի ունեցաւ մինիստրների խորհրդի երկարատև նիստը, որտեղ Պաշիչը հաղորդեց Սկոպլէում Վէնիզէլօսի հետ ունեցած տեսակցութեան մասին։ Նիստից յետոյ Պաշիչը այցելեց ռուսաց դեսպանին։ Մի շատ արժանահաւատ անձի ասելով, Սկոպլէում ունեցած տեսակցութեան արդիւնքները գերազանցում են Սերբիայի սպասածից։ Կառավարչական շրջաններում խօսում են, որ Սկոպլէում հաստատված է հետևեալ սահմանագիծը Բօլգարիայի հետ. Եգրիպալանկա-Ջումայա հին թիւրք-բօլգարական սահմանի վրայով, այնուհետև Ջումայից և Ստրումի ջրաբաժանից ու Վարդարից մինչև յունական պահանջների հիւսիսային սահմանը։ Գեվգելի և Ստրումիցա քաղաքները անցնում են Սերբիային։ Երիտասարդ-արմատականների օրգան «Օդիէզը» հաղորդում է, որ Սկոպլէում վճռված է ռուսական կառավարութեան միջոցով հաղորդել Բօլգարիային, որ Սերբիան, Յունաստանը և Չերնոգորիան պատրաստ են բանակցութիւններ սկսել Բօլգարիայի հետ հաշտվելու մասին անմիջական կերպով, չընդհատելով սակայն պատերազմական գործողութիւնները, որոնց դադրեցնելը մինչև խաղաղութիւնը ստորագրելը անհնարին է։ Սահմանը կորոշվի անմիջական բանակցութիւնների միջոցին։

—

Վիէննա.—«Կօրրեսպ. Բիւրօյին» հեռագրում են Վալօնից. «Կառավարութիւնը Օխրիդայի սերբիական քաղաքապահ զօրքի հրամանատար Միլօվանօվիչից ստացել է մի նամակ, որով երկու շաբաթ առաջ Մատի շրջանում ալբանացիների և սերբերի միջև պատահած ընդհարումը բացատրում է այսպէս. սերբերը գրաւեցին սահմանագլխի այն կէտերը, որ ձմեռը ցրտերի պատճառով մնացել էին առանց գրաւվելու. սերբերը որևէ ագրեսիվ նպատակի չեն հետամտել. ալբանացիները կարող են հաւատացած լինել սերբերի անկեղծութեանը, այնուամենայնիւ սերբերը կը գրաւեն Արօշ—Մալշէկա—Մալիդէյս—Զաֆանի գծի վրայի բոլոր կէտերը, մինչև սահմանը որոշող յանձնաժողովի գալը»։

—

Սալոնիկ.—Վէնիզէլօսի և Պաշիչի միջև լիակատար համաձայնութիւն է կայացել զինադադարի պայմանների մասին։ Բօլգարիան պէտք է հրաժարվի իր սահմանները Մակեդոնիայում ընդարձակելու մտքից։ Թրաքիայի վերաբերմամբ Յունաստանը վերջնական որոշում չէ կայացրել, այնուամենայնիւ Յունաստանը բաւականին երաշխաւորութիւններ կը պահանջէ Բօլգարիայի իշխանութեան ներքոյ ընկնող յոյների համար։ Վէնիզէլօսը այսօր ուղևորվում է Աթէնք։ Սերբիական ու յունական զօրաբանակների շտաբն են եկել ռումինական օֆիցերներ պատերազմական գործողութիւնների մէջ համերաշխութիւն ապահովելու նպատակով։

ՎԵՐՋԻՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

—

(Պետերբուրգի Հեռ. Գործ.)

5 յուլիսի

Բէյրութ.—Համաձայն Պարիզում կայացած արաբ-սիրիական կոնգրէսի արտայայտած ցանկութիւնների Բ. Դուռը կարգադրեց արաբական լեզուի գործածութիւնը մտցնել դատաստաններում և վարչական հաստատութիւններում։ Պաշտօնապէս հաստատվում է, որ խեդիվը Եգիպտոս վերադառնալուց առաջ կայցելէ Պոլիս Թիւրքիայի հետ բարեկամական յարաբերութիւնները վերականգնելու նպատակով, որը խախտված էր օսմանեան կոմիսարի հետ պատահած միջադէպի առիթով։

—

Տօկիօ.—Նացիօնալիստ կուսակցութեան պատկանող շատ չինացիներ ուղևորվեցին Շանխայ։ Լրագիրների ասելով, ամերիկական կառավարութիւնը դեսպան Չինդին յանձնել է պաշտօնական պատասխանը կալիֆօրնիական օրինագծի դէմ Եապօնիայի ներկայացրած բողոքին։

—

Լօձ.—Զգերժում գործադուլի պատճառով փակվել է Լորենց Կրուզէի մանուֆակտուրային գործարանը, ուր բանում էին 5500 հոգի։ Գործադուլ են արել Զգերժի գործարանում 300 հոգի և Լօձում մօտ 1000 հոգի։

—

Նիկօլայէվ.—Գործադուլ արին նաւաշինական մասի 2500 արհեստաւորներ։ Վերջիններիս ջանքերը՝ գործադուլ անել տալու նաև միւս մասերի արհեստաւորներին՝ անաջող անցաւ։ Տնտեսական պահանջներ են առաջադրված։

—

Լոնդօն.—Հիւում յուլիսի 3-ին գործադուլաւորները լուրջ անկարգութիւններ են արել, որը վերջացել է ուտելեղէն խանութների թալանումով։ Շիշերով ու ձուերով ռմբակոծել են ոստիկանութեանը։ Փողոցները խուժանից մաքրելը տևել է 4 ժամ։ Կան ծանր վիրաւորվածներ։

—

Պարիզ.—Բալկանեան գործերի առիթով հաւաքված ֆինանսական մասնաժողովի նիստերը ընդհատվեցին մինչև սեպտեմբերի 30-ը։

—

Պետերբուրգ.—Պետերբուրգի քաղաքապետը յայտարարել է. «Ի նկատի առնելով չընդհատվող բանւորական գործադուլները հասարակական և պետական բնոյթ ունեցող ձեռնարկութիւններում աշխատող բանւորները նախազգուշացվում են, որ այդօրինակ գործադուլները օրէնքի համաձայն ենթարկվում են քրէական պատժի։ Սենատի տուած մեկնութիւնների համաձայն, զինուորական տեսչութեան բոլոր գործարանները, որտեղ պատրաստվում են զինուորական և ծովային տեսչութիւնների պատուէրները, պատկանում են հասարակական և պետական ձեռնարկութիւնների բնոյթ ունեցող կատեգորիային։ Ուստի այն անձինք, որոնք յանցաւոր կը ճանաչվեն յիշեալ կատեգորիայի ձեռնարկութիւնների մէջ աշխատանքները դադարեցնելում, այսուհետև, անկախ ադմինիստրատիվ կարգով պատժվելուց, կենթարկվեն քրէական պատասխանատուութեան»։

—

Թէհրան.—Սալար-ուդ-Դովլէն Սէննէյին մօտիկ անձնատուր եղաւ պարսիկ կոզակներին այն պայմանով, որ իրան յանձնեն ռուսական միսսիային։

Դիպլօմատիական մարմնի մօտ տեգի ունեցաւ Թիւրքական նոր դեսպանի ընդունելութիւնը։

---

*) Տես «Մշակ» №№ 137, 138, 139, 140, 141, 142, 143, 144, 145 և 146.

Մօտ օրերս այստեղ է ժամանելու ժողովրդական լուսաւորութեան մինիստր Արֆա-ուդ-Դօվլէն, Պետերբուրգի նախկին դեսպանը։

—

Մուկդէն.—Պատժիչ արշաւախումբ է ուղարկված Ֆուշանի մօտ գործող խունխուզ աւազակախմբերի դէմ։

—

Ռիկիան.—Պուկօուլից հիւսիս սպասվում է վճռական ճակատամարտ Նանկինի զօրքերի և գեներալ Չժանսունի զօրաբանակի միջև։

ԹԻՒՐՔԻԱՆ ԵՒ ՊԵՏՈՒԹԻՒՆՆԵՐԸ

II*)

Յայտնի է, որ Գերմանիան գիտէր անգլօ-թիւրքական բանակցութիւնների ընթացքի մասին։ Այն հանգստութիւնը, որով գերմանական քաղաքական շրջաններում ընդունեցին անգլիական քաղաքականութեան նման չեղած աջողութիւնների լուրը, ցոյց է տալիս, յամենայն դէպս, որ Բեռլինը նրանց վերաբերմամբ որոշ չափով պատրաստված էր։ Այստեղ նրա համար ինչպիսի կոմպէնսացիաներ կարող են լինել։ Այդ կոմպէնսացիաների մի տեսակի մասին արդէն յայտնի է. դա մինչև Բաղդադ ճանապարհի վերջացնելու լիակատար ազատութիւնն է և այստեղից տրամաբանօրէն բղխող դէպի Պարսկաստանի հիւսիսը շարժվելու հնարաւորութիւնը, Խանեկենով դէպի Թէհրան։ Ուրիշ կոմպէնսացիաներ կարելի է Աֆրիկայում սպասել։ Մամուլի մէջ արդէն լուրեր սփռեցին Անգլիայի Կիտեբի ծովախորշը զիջելու, զանզիբարեան խնդրի կարգաւորման և Անգլիայի համաձայնութեան մասին՝ միացնելու գերմանական գաղթավայրերը երկաթուղային գծերով Բելգիական Կոնգոյի միջից—«աֆրիկական երկաթէ խաչի» լայնութեան գծի կառուցման մասին։ Գրէյի ոչ վաղ ժամանակում արած յայտարարութիւնը Կոնգոյի աննէկսիան Անգլիայի կողմից ճանաչելու մասին՝ այդպիսի հնարաւորութեան ապացոյցներից մէկն է ծառայում։ Անգլիան բողոքում էր աննէկսիայի դէմ յայտնի չափով սև ցամաքի վրա գերմանական «Welt-politik»-ի զարգացմանը օգնել չը ցանկանալու պատճառով։ Այժմ այդ արգելքները ոչնչանում են։

Հետաքրքրական է յիշատակել մի հանգամանք ևս։ Մինչև այսօր բրիտանական դիպլոմատիայի վերաբերմունքը բալկանեան պատերազմի լիկվիդացիայի խնդիրներում ամբողջովին համապատասխանում է այն «հանգամանքների» բնաւորութեան հետ, որոնք դրված են Անգլիայի վրա անգլօ-թիւրքական համաձայնութեամբ։ Միայն շնորհիւ Անգլիայի պնդումների հաստատվեց Միդիա-Էնոս սահմանը. դարձեալ միայն շնորհիւ Գրէյի կտրուկ յայտարարութիւնների սահման դրվեց «արևելեան բաղարին», և բալկանեան դաշնակցութեան պատգամաւորները հարկադրված տեսան իրանց շատ պակաս ստորագրելու սկզբնական խաղաղութիւնը։ Հետևապէս կարելի է սպասել նաև յետագայ քայլերի, պայմանաւորված այդ համաձայնութեամբ,—սպասել Թիւրքիայի ֆինանսական աջակցութեան նաև Պարիզի կոմիսիայում։

Բայց Պարիզի կոմիսիան, անենք, ռուսական մերձ-արևելեան քաղաքականութեան վերջին յոյսն է։ Եթէ ռուսական դիպլոմատիան դեռևս մի որևէ բանով կարող է բարձրացնել իր վարկը բալկանեան պետութիւնների աչքում, ապա նրանց ֆինանսների համար նպաստաւոր պատերազմական տուգանքի պահանջման հարցով միայն։ Այդ իմաստով էլ այժմ Պետերբուրգում եռանդուն գրոհ է տարվում՝ Պարիզի դիպլոմատիայի վրա։ Միայն թէ՝ ինչպէս ցոյց է տալիս վիճաբանութիւնը, բորբոքված՝ Ֆրանսիայի քաղաքական մամուլի մէջ, Ֆրանսիայում ոչ բոլորը հակամիտ են բաժանելու նոյն հայեցակէտը, որ փոխադարձ աջակցութեան պարտաւորութիւնները, բղխած ֆրանս-ռուսական ալլիանսից, տարածվում են և ֆինանսա-տնտեսական հարցերի շրջանում։ Ամբողջ մի շարք իմպէրիալիստական թերթեր ջերմութեամբ այժմ աշխատում են ապացուցել, որ այդ երկու շրջանները շփոթելու կարիք չի լինի, և որ քաղաքականութիւնը պէտք է անջատվի էկօնոմիայից։ Դաշնակցութիւնը դաշնակցութեամբ, բայց Ֆրանսիան Բալկաններում մացրել է աւելի քան $2^1/_2$ միլ. ֆրանկ, որպիսի հանգամանքն ուշադրութեան չառնելը անհնար է մինչև իսկ յօգուտ դաշնակցի։

Կար մի մոմենտ և քաղաքական բաղդի դիցուհին պէտք է ժպտար Պետերբուրգի դիպլոմատներին և նրանց պաշտպանող սլաւօֆիլներին։ Ցարբրօդում տեղի ունեցաւ Պաշիչի տեսակցութիւնը Գէշօվի հետ 1912 թ. փետրվարի 29-ի պայմանագրի վերաքննութեան խնդիրների առիթով, որը կռուախնձոր դարձաւ դաշնակիցների համար։ Նրա վերաբերմամբ, սակայն, վերջնական համաձայնութիւն չը կայացաւ։ Բայց վէճի լուծումը փոխադրվեց բալկանեան պրէմիէրների կոնֆերենցիային այն նպատակով, որ, անաջողութեան դէպքում, բանակցութիւնները շարունակվէին արդէն Պետերբուրգում, Ռուսաստանի վերին արբիտրաժի տակ։

Այդ թոյլ էր տալիս յուսալ, որ Պետերբուրգը դեռ հնարաւորութիւն կը ստանայ «ասելու իր խօսքը», և թևաւորում էր երազներով մեր սլաւօնասէրներին։ Սակայն գրեթէ «աջող» տեսակցութեան հաղորդագրութիւնների հետ միաժամանակ անսպասելի լուրեր հասան Գէշօվի անկման մասին իր Սերբիայի վերաբերմամբ ցոյց տուած չափազանց «զիջողութեան» համար։ Հերթին դրված էր իշխանութեան զինուորական կուսակցութեանն անցնելու խնդիրը։ Բալկանեան ճգնաժամը նորից սուր կերպարանք ստացաւ։ Բալկանեան դաշնակցութիւնը նոր ճեղքուածքներ երևան հանեց։ Հակառակ մեր հայրենական քաղաքագէտների անձնական ցանկութիւններին՝ պատերազմի տրամաբանութիւնը շարունակում է իր գործը։ Բալկաններում կեսարիզմը բարձրացնում է գլուխը։ («R. M.»)

---

[*] Տես «Մշակ» № 146.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԱԴԱՄ ՍԱՐԴԱՐԵԱՆ
ՌՇՏՈՒՆԻ ԱՐԵՒՇԱՏԵԱՆ

—

> Ո՞ւմն է այս գանգը...
> ...Խեղճ Եօրիկ, ես նրան ճանաչում էի։
>
> Համլէտ

Եւ ո՞վ չէր ճանաչում մեր Եօրիկին, հայ բեմի Եօրիկին։ Ի հարկէ նրան չէին ճանաչում միայն նորաբողբոջները, որոնք գոռոզ իրանց անգիտակցութեամբ ենթադրում են, թէ ամէն ինչ իրանք են ստեղծում։

Յիշո՞ւմ էք, Արքունական հին թատրոնում երբ առաջին անգամ բեմի վրա դրվեց «Հայ կանայք Բոսֆորի ափերում». միտքնե՞րդ է՝ ինչպէս էին նուաղում Մնակեանը և հետն էլ մի ուրիշ ֆէս դրածը՝ Ռշտունին։ Եւ ինչպիսի՜ էքստազով էին նրանք հայուհիներին (Գարագաշ քոյրերին, Աստղիկ ու Սիրանոյշ չքնաղ քոյրերին), Բոսֆորի աննման գեղանի յորձանքներին դիմադրում՝ «Հէրիք, որդեակք, այսքան տարվայ տառապանք»-ը աղի ծով անելով։

Այդ օրը մեր Սարդարը ամէնքից շատ էր ջանացել մեզ հետ Հրաչեային, Գարագաշներին, գէթ կարտօնի նաւակում, շինծու Բոսֆորի ափերում պատսպարելու։

Աւարտելով 1873 թ. Ներսիսեան դպրոցը, Ադամ Սարդարեանը մտնում է ուսուցչական ասպարէզ. սակայն հայ թատրոնի հիմնադիր մեր նահապետ դերասան Գէորգ Չմշկեանի աչքից չէր վրիպում Սարդարեանը. և ահա նա զինուորագրում է և Սարդարեանին իր բանակին ու մկրտում նրան Ռշտունի անունով։ Եւ առաջին անգամ նորընծայ Ռշտունին բեմ է դուրս գալիս 1875 թւին «Սէր և նախապաշարմունք» պիէսի մէջ Ֆրիդրիխի դերում։ 1877 թ. Մոզդօկում ստանձնում է ուսուցչի պաշտօն, ուր միաժամանակ կազմակերպում է և թատրոնական ներկայացումներ ու խթան լինում դպրոցին կից և բեմ կառուցանելուն։

Բայց ահա հայ թատրոնի ոսկեշրջանը՝ 1879 թւականը. և Գէորգ Չմշկեանի ցուցմունքով իշխան Ն. Ամատունի հրաւիրում է Ադամ Սարդարին շուտափոյթ Թիֆլիս վերադառնալ. և նա ստանձնում է սցէնարիուսի պաշտօնը, միաժամանակ յանձնվելով նրան ռեպերտուարի համար որոշված պիէսները արտագրել տալը և ընկերների մէջ համերաշխութեան օղակ լինելը։ Քմահաճ Ադամեանը՝ մեր կենցաղին դեռ անծանօթ, Կ. Պօլսից եկած դերասանուհիների ոտընձգութիւնները, Մնակեանի խրատածի լինելը և մեր դերասանների ոգևորված գաղափարական գործունէութիւնը պէտք էր շարունակ հաշտեցվէր. և սրտաբուխ իր կատակներով, սրախօսութիւններով եռանդուն ու ազնիւ Ադամ Սարդարեանը հրդեհը հանգցնում էր, հրաբուխները կանգնեցնում իր մի հանաքով, փաղաքշանքով։

1901 թ. Թիֆլիսում կատարվեց Ադամ Սարդարեանի բեմական գործունէութեան 25-ամեակը։ Ներկայացրին իրան յօբելեարի «Վէրք Հայաստանի»-ից փոխադրած «Ալամ-Բալասի», «Բաղդասար-աղբար» և «Զուբէյդա» դրամաներից։

Ադամ Սարդարեանի թէ ինքնուրոյն, թէ փոխադրած պիէսները 20-ից աւելի են։

Հանգուցեալը նշանաւոր էր և իբրև մանկական գրող։ Մանուկների համար նրա անհամար ֆելիէտոնները, հանելուկները, հէքիաթներն ու զուարճախօսութիւնները տպված են «Աղբիւրում»։ Ա. Սարդարեանի փոխադրած «Զարաճճի Արամի արկածները» «Աղբիւրի» հազարաւոր մատաղ ընթերցողներին մեծ հրճուանք էր պատճառել։ Սիրում էր գրական սպորտներ, օրինակ նա գրում է մի պատմուածք, որի մէջ չը կայ «ա» տառը, կամ չը կայ մի ուրիշ նման շատ գործածական տառ։

Ա. Սարդարեան ծառայում էր և Թիֆլիսի Փոխադարձ Վարկի Ընկերութեան մէջ ու շատ սիրելին էր թէ Գ. Սունդուկեանի, թէ Ն. Ամատունու, թէ Ս. Յովհաննիսեանի և թէ թատերասէր այն ժամանակվայ կոմիտէի բոլոր անդամների, իսկ ընկերների համար Ադամը հոգի էր։ Առոգանութիւնը նմանեցրել էր պօլսեցիներին, և ոչ ոք չէր կարող ասել, որ Սարդարը ծնվել ու մեծվել է Թիֆլիսում։ Ծնվել է 1856 թ. հոկտեմբերի 8-ին։ Ունի մանրադնին, անտիպ յիշողութիւններ մանաւանդ թատրոնի շուրջը։ Կազմել էր պատկերազարդ այբբենարան, որ անտիպ է։ Վերջին տարիներս, հիւանդ՝ թոքախտով, քաշված էր հրապարակից։ Երբեմն կը գար ինձ մօտ, սակայն հազը, հետն էլ քրտինքը, շնչասպառ լինելը...

Մնաս բարև, Սարդար։ Պօլօնիոսն էլ նրէկ գնաց. ճանապարհը հարթ է, Սարդար... էլ չես հազում, չէ... Տ. Նազարեան

ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ ԳԱՒԱՌԻՑ

—

Ռուս էկսկուրսանտներ էջմիածնում

Վաղարշապատ, 30 յունիսի

Համառուսական բնագէտների և բժիշկների XIII համագումարին մասնակցած բնագէտներից և բժիշկներից ոմանք՝ չը նայած յունիսեան կիզիչ արեգակին՝ ամսիս 27-ին, 28-ին և 29-ին Երևանից կառքերով և հանրակառքերով մտան Վաղարշապատ։

Ինչպէս երևում էր, համագումարի անդամների—բացառութեամբ մի քանիսների—համարեա մեծագոյն մասը առաջին անգամն էր լինում Էջմիածնում։

Հիւրերը Խրիմեանի՝ Ներսիսեանի լճի ափին շինած հիւրատանը իջան։ Վանքի նոր հիւրընկալ Վրթանէս արեղայ Յակոբեանը պատշաճաւոր ընդունելութիւն ցոյց տուեց հիւրերին։

Վանքի հիւրատունը ունի յատուկ մատեան, որտեղ այցելուները գրում են իրանց սեփական ձեռքով, թէ ինչ տպաւորութիւն են ստացել Էջմիածին մտնելիս և առհասարակ նրա շրջակայ հնութիւնները դիտելիս։

Ամսիս 27-ին եկան հիւրեր 58 հոգի, որոնք ճաշեցին լճի ափին, որը իր բանաստեղծական դիրքով գրաւեց բոլորի ուշադրութիւնը։ Հետևեալ օրը եկան 25 հոգի, իսկ երրորդ օրը 9 հոգի, որոնք հիւրասիրվեցին հիւրատան դահլիճում։

Բոլոր սրբավայրերը ցոյց էր տալիս ինքը հիւրընկալ արեղան, օգնական ունենալով նոր ձեռնադրված Կարապետ սարկաւագ Յարութիւնեանին։

Առհասարակ ճաշերին հիւրընկալը հրաւիրել է և մի քանի վանականների, որպէսզի շփում առաջ գայ, և գիտնականները ծանօթանան վանքի միաբանութեան հետ։ Բայց, ինչպէս իմացանք, միայն եղել են սինօդի անդամ Բաբգէն վ. և վանական կառավարութեան նախագահ Մուշէ վ.։

Հիւրերի վրա լաւ տպաւորութիւն էր թողել Գարեգին վարդապետը իր ձեռագրերի մասին գիտական գեղեցիկ բացատրութիւն տալուն համար։

Շոգերը մեզանում սկսվել են. արևի տակ ջերմաչափը ցոյց է տալիս 46—48°.

Ցորենի հունձը սկսվել է և շատ անմխիթար վիճակի մէջ է շնորհիւ ջրի պակասութեան և ժամանակին անձրևներ չը տեղալուն։

Բամբակների մասին առայժմ ոչինչ չէ կարելի ասել. այդ ևս կախված է ջրից։

Վ. Ք. Աղազադեան

—

Պետրովի դասախօսութիւնը

Թէոդոսիա, 25 յունիսի

Յայտնի հրապարակախօս (նախկին քահանայ) Պետրովը, ըստ իր սովորութեան, ինչպէս ամեն տարի՝ այնպէս էլ այս տարի եկել է ամարանոց իր կալուածքը՝ Գօկտեպէն, որը գտնվում է Սև-ծովի ափին, Թէոդոսիայից 15 վերստ հեռաւորութեամբ։ Նա սրանից մի քանի օր առաջ եկաւ Թէոդոսիա և քաղաքի ամառային դահլիճում կարդաց մի դասախօսութիւն «Գաղափարի դատարկութիւն» թեմայով։

Դասախօսի յայտնի անունը և նիւթի արտասովոր վերնագիրը՝ դահլիճ էին գրաւել առանց ազգի ու կրօնի խտրութեան ժողովրդի հոծ բազմութիւն։

Մեր նպատակից դուրս համարելով օրվայ դասախօսութեան նիւթը ամբողջապէս առաջ բերել, կարևոր ենք համարում յայտնել, որ դասախօսը կանգ առնելով ռուս ազգի մի շարք յայտնի գրողների վրա՝ առանձնապէս շեշտեց Պուշկինի, Գօգօլի և միւսների մասին, թէ որքան մեծ հարստութիւն են տուել ռուս գրականութեանը։ Դասախօսը յիշեալների մասին մի շարք գրուատութիւններ անելուց յետոյ՝ առանձնապէս ցաւ յայտնեց ռուս ազգի այժմեան սնանկ գրողների մասին, որոնք իրանց մտքի ու գաղափարի դատարկութեամբ փչացնում են ռուսական հարուստ գրականութիւնը և ժողովրդի վարք ու բարքը... Շնորհիւ իր թեմայի հարուստ բովանդակութեան և ճարտասանական ոճի, դասախօսը արժանացաւ անվերջ ծափահարութեան։

Որքան մեզ յայտնի եղաւ, Պետրովը կարդալու է մի քանի դասախօսութիւններ ևս ու կարճ ժամանակով մեկնելու արտասահման։

Կիւր. ս. Աբգարեան

Մանր վարկի ընկ. եւ հրշէջ կառք

Ախալքալաք գիւղ (Գօրու գաւ.), 23 յուն.

Այս տարվայ սկզբից համարեա թէ միաժամանակ բացվեցին Ախալքալաքում և իր շրջակայ Դուէս, Մեսեխ և Կաւթիսխև գիւղերում տեղական բանիբուն երիտասարդների ջանքով մանր վարկի ընկերութիւններ։ Վաշխառութիւնը, որ վերջին ժամանակներս մեծ ծաւալ էր ստացել, յուսով ենք, որ հետզհետէ թուլանայ։

Ախալքալաքում գործն սկսվեց 30 անդամով, այժմ ունի մօտ 280 անդամ։ Պետական բանկը փոխարինաբար տուեց 6000 ր. 9 ամսով և 2000 ր. 13 ամսով։

Վարչութեան անդամներն են՝ ծխ. դպրոցի ուսուցիչ Ս. Նազարեան, ատենադպիր Նոդաձէ և Գօգալաձէ։ Վերստուգիչ յանձնաժողովի անդամներ՝ իշխան Գ. Թարխանով, ֆելդշէր Քարումիձէ և Ա. Օքրոյեան։

Ընկերութիւնը պարտքով տուած փողի համար վերցնում է $12^0/_0$, իսկ ի պահեստ վերցրած փողին վճարում է $7^0/_0$։

Յունվարից մինչև յունիսի 1-ը ընկերութեան օգուտ է մնացել մօտ 514 ր., այդ գումարից ծախսվել է պահարանի, մատեանների և այլ իրերի համար մօտ 259 ր.։ Որպէս նոր և համակրելի գործ՝ ծխատէր Յար. ք. Մխիթարեանը իր բնակարանը 3 ամսով զիջեց ձրիաբար բանկային օպերացիաներ կատարելու համար։

Մօտ օրերս Մոսկվայից կը ստացվի Ախալքալաքի համար հրդեհաշէջ կառք, որի համար հանգանակվեց 170 ր. տեղիս բնակիչների ջանքով, որով և կը վերանայ մշտական երկիւղը հրդեհի դէպքում։

Յ. Ք. Մ.

—

Շօլլար-Բագու ջրանցքի մասին

Ղուբա, 29 յունիսի

Շօլլար-Բագու ջրանցքը աւարտելու համար անգլիացի և գերմանացի վարպետները անդադար հիմա էլ աշխատում են և գուցէ գործը մի տարուց աւարտեն և ջրանցքը պատրաստ լինի։ Դրանից յետոյ, ինչպէս լուրեր են պտտում, մնացած ճանապարհների վրա ըէլսներից պիտի երկաթուղու գիծ անցկացնեն Խաչմազից Ղուբա։ Ինչ խօսք, որ Խաչմազում գործարանական հարիւրաւոր բանւորները մեծ զարկ տուին վաճառականութեան. նրանք չեն զլանում իրանց և մասնաւոր ուրախութիւններից. ունեն անգլիական ֆօկուսնիկ, որը սալօնական ֆօկուսներ է անում։

Մ. Սալամբէգեան

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

◆ Այս տարի լրանում է պրօֆ. Ն. Եակ. Մառի գիտական գործունէութեան 25-ամեակը։ Յօբելեանական տօնակատարութիւնը տեղի կունենայ այս աշնանը։ Հայ հասարակութիւնը, որ շատ բան է պարտական պատկառելի գիտնականին, անշուշտ ջերմ մասնակցութիւն կունենայ։

◆ Առևտրականների բանկը իր ծառայութիւնն է առաջարկել քաղաքային վարչութեանը բոլոր ֆինանսական ու բանկային գործառնութիւնների մէջ վերջինիս համար շահաւէտ պայմաններով։

◆ Երէկ, յուլիսի 6-ին, պոլիտեխնիկումի տեղը որոշելու նպատակով նշանակված յատուկ մասնաժողովը փոխարքայի խորհրդի անդամ Մ. Հակկէլի նախագահութեամբ դիտել է Նաւթլուղի և Լօտկիս-Գօրայի քաղաքապատկան հողերը։

◆ Քաղաքային վարչութիւնը տեղեկութիւններ է ստացել, որ ալիւրի և եղջերաւոր անասունների գները ներկայումս իջել են և հետևապէս հնարաւոր է հացի ու մսի սակագները պակասեցնել։

◆ Քաղաքային վարչութիւնը համաձայնութիւն է կայացրել քաղաքային Շիօյեվայի տան մէջ կրպակ ունեցողների հետ, ստորագրութիւն առնելով նրանցից, որ նրանք լիակատար բաւարարութիւն են ստացել քաղաքից իրանց կրած վնասների համար, և ապա նոտարական կարգով պայմանաւորվել է առաջիկայի համար։ Այդտեղի բոլոր կրպակները փակվելու են մինչև սեպտեմբեր։

◆ Նահանգապետի պահանջով քաղաքային վարչութիւնը Գօլովինսկի պրօսպէկտի վրա գտնվող «Կրուժօկի» շէնքի յատակագիծն ու մակարդակը ներկայացրել է նահանգական շինարարական բաժանմունքին ի հաստատութիւն։ Միաժամանակ վարչութիւնը հաղորդել է, որ նա իրան պարտաւոր չէ համարում այդ տեսակ յատակագծերը ներկայացնել նահանգական իշխանութեանը ի հաստատութիւն, քանի որ այդ իրաւունքը պատկանում է իրան։

◆ Անցեալ տարի Վերայի կամուրջից քիչ վեր Կուր գետում քաղաքը շինել էր տաւել լողարան. այս տարի չը կայ այդ լողարանը և մարդիկ լողանում են զանազան տեղերում, գլխաւորապէս Մուշտայիդի մօտիկ գետափին։ Երէկ, յունիսի 6-ին, նշանակված յատուկ մասնաժողովը դիտեց գետի երկու ափերը՝ լողանալու համար ապահով տեղեր որոնելու նպատակով. վատ չէր լինի, եթէ հէնց Մուշտայիդի մօտ, ուր կայ նաև ազատարար պահակակէտ, քաղաքային վարչութիւնը կարգադրէր տախտակամած պատրաստել, որպէսզի լողացողները փոխանակ աւազուտի մէջ հանվելու՝ հնարաւորութիւն ունենան մաքուր տախտակամածի վրա հանել իրանց շորերը և հագնվել։

◆ Թիֆլիսի էլեկտրաքարշի ընկերութիւնը, ինչպէս յայտնի է, այս տարվանից Վերայի կամուրջով և Մուշտայիդի փողոցով էլեկտրաքարշով երկաթուղային կայարան երթևեկողներից վերցնում էր 8 կոպ.։ Այդ առիթով նահանգապետը բացատրութիւն էր պահանջել քաղաքագլխից, որը իսկոյն էլ ներկայացրել էր։ Այդ բացատրութիւնը նահանգապետը գտել էր անբաւարար ու քաղաքի ու էլեկտրաքարշի ընկերութեան միջև կայացրած պայմանագրի ոգուն անհամապատասխան, ուստի առաջարկել էր այդ լրացուցիչ տարիֆը, 3 կոպէկ, վերացնել և այսուհետև այլևս չը շեղվել ոչ պայմանագրի և ոչ էլ օրէնքի պահանջներից։ Յունիս ամսում քաղաքագլուխը այդ պահանջին պատասխանել էր, որ արդէն վերացված է այդ տարիֆը և այդ մասին հաղորդված էլեկտրաքարշի ընկերութեանը։ Այժմ նահանգապետը նորից է դիմել քաղաքագլխին, յայտնելով որ էլեկտրաքարշի ընկերութիւնը առաջվայ պէս շարունակում է 8 կոպէկ վերցնել Սամանեայա հրապարակից Մուշտայիդի մօտով կայարան և Երևանեան հրապարակից Վերայի կամուրջով ու Մուշտայիդի մօտով կայարան գնացողներից, մինչդեռ 27 տարի շարունակ այդ գծերով երթևեկողներից վերցրել են միշտ 5 կոպէկ։ Որովհետև քաղաքային դուման այդ հարցի քննութիւնը ձգձգում է առանց որևէ յարգելի պատճառի, ուստի նահանգապետը առաջարկել է քաղաքագլխին անմիջապէս այդ հարցը յանձնել քննելու քաղաքային իրաւաբանական մասնաժողովին և ապա ներկայացնել դումային քննութեան առաջին իսկ նիստում։

◆ Մանթաշեան առևտրական դպրոցի տեսուչ Վ. Ա. Բարսեղեանի արձակուրդ ստանալու պատճառով, նրան փոխարինում է նոյն դպրոցի ուսուցիչ Վ. Գօլուբցովը։

◆ Երկրագործական մինիստրութեան Կովկասի լիազօրը խնդրատու անձանց և իր հետ անձամբ գործ ունեցողներին ընդունում է հինգշաբթի, ուրբաթ և շաբաթ օրերը ցեր. ժամը 10—12-ը։

◆ Յուլիսի 5-ի գիշերը ժամը 1-ին Անդրէեվսկայա փողոցի վրա, № 25 տանը, իր բնակարանում Կուբանեան պլաստունների 5-րդ բատալիոնի սօտնիկ Վիկտօր Իվանովիչ Բէրստօրուաը անձնասպանութիւն գործելու նպատակով ընդունեց աֆիոնի լուծուածք։ Նրան իսկոյն ուղարկել են Միքայէլեան հիւանդանոց։ Կեանքը վտանգից դուրս է։ Պատճառը կեանքից հիասթափվելն է։

◆ Քաղաքային վարչութիւնը, ինչպէս ասել էինք, ծառայութիւնից հեռացրել է 2,673 ր. 82 կ. վատնումի հեղինակ Ն. Մարգարեանին, որը յետոյ լրացրել է այդ գումարը, և կոնտրօլեօր Մասինօվին։ Բացի դրանից իր վերջին նիստում վարչութիւնը որոշել է նկատողութիւն անել քաղաքային գլխաւոր կոնտրօլեօր Գ. Տէր-Դաւթեանին և առևտրա-տնտեսական մասի աւագ վերահսկիչ Շահվերդեանին անբաւարար հսկողութեան համար։

◆ Քաղաքային վարչութեան անդամ Գ. Դ. Ժուբուլին արձակուրդով հեռացել է քաղաքից։ Նրա պարտականութիւնները ժամանակաւորապէս վարելու է վարչութեան անդամ-պաշտօնակատար Մ. Ա. Զաքարը։

◆ Քաղաքային քիմիկոս Գ. Գ. Ալիբէկեանը ներկայացրել է վարչութեանը Շանշիէվի կալուածքի (Թիոնէթի գաւառ) աղբիւրներից վերցրած ջրի քիմիկօ-բակտերիօլօգիական հետազօտութիւնները, որոնք վկայում են, որ այդ ջուրը կակուղ է և իր յատկութեամբ աւելի լաւ, քան Նատախտարի ու Աւճալեան աղբիւրաջրերը։ Սակայն ստացվող ջուրը (մօտ մի միլիօն վեդրօ օրեկան) չէ կարող բաւարարել քաղաքի պահանջը։

◆ Քաղաքային փողերը վատնող գործակալ Ն. Մարգարեանը, ինչպէս ասում են, իր մօտ ունեցել է 10 հատ կվիտանցիայի գրքոյկներ, որոնցից երկուսը պահել է իր մօտ և նրանցով ստացել փողեր, բայց չէ ներկայացրել ստուգութեան համար, ինչպէս որ սովորաբար տեղի է ունենում ամէնայն օր։ Այն վատնումը, որ երևան է հանված, այսինքն 2,673 ր. 82 կոպէկը, մի կվիտանցիօն գրքոյկով է. երկրորդը անյայտացել է։ Մարգարեանի ասելով, իր մօտից գողացել են։ Արդեօք այդ գրքոյկով խոշոր գումարներ չե՞ն հաւաքված տնատէրերից։ Վատ չէր լինի, եթէ քաղաքային վարչութիւնը ստուգութեան համար դիմումն աներ Մարգարեանի շրջանի բոլոր տուրք վճարողներին պարզելու իրանց տուած գումարները համաձայն կվիտանցիաների։

◆ Քաղաքային առևտրա-տնտեսական ոստիկանութեան ձեռք առած եռանդուն միջոցների շնորհիւ Թիֆլիսում գտնվող բոլոր աւտոմօբիլների վրա սահմանված է ամեն մի ոյժի համար 3 ր. տուրք։

◆ Յուլիսի 2-ի երեկոյեան էլեկտրաքարշի վագոնում Թիֆլիսի քաղաքացի Բ. Ս. Փիրումեանի գրպանից իր կողքին նստած գրպանահատը հանել է 250 րուբլի արժեցող ոսկէ ժամացոյցը իր շղթայով և Բուսսկայա փողոցից անցնելիս ցած թռել ու սկսել փախչել։ Ժամացոյցի գողանալու մէջ կասկածելով փախչողին, Փիրումեանը կանչում է քաղաքապահին, որը և բռնում է չարագործին։ Բռնվածը Թիֆլիսեցի Գ. Կ. Թադէոսեանցն է, պարապմունքով գրպանահատ։ Կալանաւորվածը, խոստովանելով իր յանցանքը, յայտնել է, որ ժամացոյցը իսկոյն յանձնել է իր ընկերներ Վ. Գ. Գաւրիլօվին և Մ. Դ. Բէժանօվին։ Վերջինիս մօտ գտել են Փիրումեանի ժամացոյցը և տիրոջը վերադարձրել։

◆ Թիֆլիսի երաժշտական ընկերութեան նախագահ Տէր-Դաւթեանին թոյլատրված է ընկերութեան միջոցները աւելացնելու համար յուլիսի 13-ին, 14-ին և 15-ին զբօսանք կազմակերպել «Մուշտայիդ» այգում։

◆ Թիֆլիսի օդաչու Վ. Քէբուրօվին նահանգապետը թոյլատրել է հանգանակութիւն սկսել մօտոր գնելու համար։

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Թիֆլիս, 5 յուլիսի

Ի նկատի առնելով, որ Երևանի թեմական յօբելեանական յանձնաժողովի կոչերից մէկն ևս ստացված է նուաստիս անուամբ՝ որպէս նոյն թեմի Թազա-գիւղի երկդասեան դպրոցի աւ. ուսուցչի և որովհետև թեմի հոգ. գործակալը իր № 194 գրութեամբ խնդրում է որքան կարելի է օժանդակել դպրոցական ֆօնդի ժողովարարութեան գործը աջող կերպով առաջ տանելու, ուստի այսու դիմում եմ հայ հասարակութեանը խնդրելով աջակցել ըստ կարելւոյն դրամներով համազգային տօների յաւերժացման ակտի՝ դպրոցական ֆօնդի հանգանակմանը։

Թէ որքան կենսական պահանջ է դարձել դպրոցների սատարացման խնդիրը մեր իրականութեան մէջ, թւում է, որ այդ առիթով երկու կարծիք լինել չի կարող. ուստի յուսով ենք, որ ամեն մի գիտակից անհատ, զգալով դպրոցական ֆօնդի կարեւորութիւնը, ընդ առաջ կը գնայ մեր կոչին և չի զլանայ իր լուման ձգելու այն ծով կարիքի գանձարանը, որ ամոքելու է բազում մանկանց մատաղ հոգիները։

Դրամները կարելի է յանձնել «Մշակի» խմբագրութեանը, ուր և կը ստորագրվի իւրաքանչիւր նուիրատուի անուն-ազգանունը և նուիրված գումարի քանակը այդ նպատակով կազմված ստորագրութեան 1563 համարակիր թերթում։

Աստ. Վարդանեան

ՅՕԳՈՒՏ ՍՈՒՐԱՄԻ ԾԽԱԿԱՆ ԴՊՐՈՑԻ

Պետերբուրգ, 25 յունիսի

Սուրամի եկեղ.-ծխ. դպրոցի 50-ամեայ յոբելեանի առիթով Պետերբուրգից նուիրել են.

Ա. Բ. Ասիբէգեան 100 ր., Տ. Տէր-Մաթէոսեան և տիկ. Ա. Ս. Նազարեան 25-ական ր., գեն.-մ. Պ. Ս. Սուլթան-Շահ և Ս. Մ. Ասվատուրով 20-ական ր., Դ. Խ. Զաւրեան և Ս. Նազարեան 15-ական ր., Գր. Տիգրանեան, Ս. Մութաֆեան և Գր. Խրգեան 10-ական ր.։

Բացի այս՝ Ռոստովի բնակիչ ամուսիններ Ա. Ի. և Մ. Զ. Բեշկէնեանները տարեկան նպաստ 50-ական ր.։

Զայն

ՕՐՎԱՅ ՆՈՐՈՒԹԻՒՆՆԵՐ

◆ Պրագայում հրատարակվող «Keichenberger Zeitung» թերթը, որ գերմանական նացիոնալիստների օրգանն է, քննութեան ենթարկելով լեհերի մէջ սկսված յեղափոխական խլրտումների հարցը, մատնանիշ է անում Լօնդօնում լեհական արմատական կուսակցութիւնների կողմից դեսպանների խորհրդակցութեանը ներկայացված յիշատակագիրը և ասում է. «Եթէ ուշադրութեան առնենք Գալիցիայի անցքերը, որոնք ծայրայեղ չափերի են հասել արդէն, օրինակ Լվօվում անցեալ կիրակի տեղի ունեցած տասնեակ հազար զինւորական եղանակով կազմակերպված սոկօլների խաղերը, պէտք է գանք այն եզրակացութեան, որ մենք գործ ունենք սիստեմատիկ ագիտացիայի հետ, որը ծագում է Գալիցիայից։ Այդ բանում մեղաւոր է աւստրիական կառավարութիւնը, որ աջակցութիւն է ցոյց տալիս զինւորական ձեւով սոկօլների կազմակերպութեանը։ Միակ միջոցը, որ ձեռք է առել կառավարութիւնը ընդդէմ սպառազինված ագիտացիայի, դա զինւորական հրահանգիչների յետ կանչելն է։ Ընդհանրապէս ռազմիկ կազմակերպութիւնները Գալիցիայում ազատօրէն աճում են կառավարութեան աչքի առաջ, և այդ՝ այն աստիճան, որ մօտ ժամանակներս նոյն իսկ սոկօլների սպարապետներից մի քանիսը գնացին Շվէյցարիա՝ համալսարաններում ուսումնասիրելու զինւորական գիտութիւնները։

◆ Վիէննայի թերթերը հաղորդում են, որ երբ Ռուսաստանը տեղեկացրել է Ռումինիային, թէ ինքը թոյլ չի տայ նրան գործել Բօլգարիայի դէմ ընդարձակ չափերով։

◆ Պօլսից հեռագրում են մայրաքաղաքի թերթերին, որ Նիզամի-փաշան Սերբիայի ներկայացուցիչ Պավլովիչի հետ համաձայնութիւն է կայացրել ռուսական դեսպանատանը։ Նոյնպիսի համաձայնութիւն յոյս ունեն կայացնելու նաև Յունաստանի և Ռումինիայի հետ։ Թիւրք քաղաքական շրջաններում ենթադրում են, որ թիւրք-սերբօ-ռումին-յունական համաձայնութիւնը կը յանգի ի վերջոյ մի նոր բալկանեան դաշնակցութեան։

◆ Լօնդօնի քաղաքական շրջաններում խօսում են, որ Դանէվի ու նրա կաբինէտի քաղաքական մի շարք սխալների շնորհիւ Բօլգարիայի դրութիւնը վատթարացաւ։ Թիւրքիան, օրինակ, պահանջում էր մաքրել այն շրջանը, որը խաղաղութեան պայմանագրի համաձայն ճանաչվել էր Թիւրքիայի սեփականութիւն։ Դանէվի ձգձգումները առիթ տուին Բարձրագոյն Դրանը ընդհատել բանակցութիւնները և զօրքեր ուղարկել, ինչպէս ասում են, Ադրիանօպօլիսը խլելու նպատակով։ Ռումինիան, ենթադրում են որ, իր սահմանակից շրջանը գրաւելուց բացի, մտադիր է պահանջել աւտօնոմիա Մակեդոնիայի համար։ Բօլգարիայի միակ փրկութիւնն է շուտափոյթ կերպով հաշտվել Սերբիայի հետ, որի պահանջները համեմատաբար աւելի են չափաւոր, քան Յունաստանինը։ Սերբիայի պահանջն է զինադադարի հետ միասին հաշտութիւն կայացնել։

◆ Ֆրանսիան և Ռուսաստանը աշխատում են զսպել Սերբիայի և Յունաստանի ախորժակը, որոնք իրանց պահանջկոտութեամբ ձգտում են վերջնականապէս ստորացնել Բօլգարիային։ Սերբիան այժմ պահանջում է բացի Վարդարի հովտից, նաև Օվչէ դաշտը, իսկ Յունաստանը երազում է, բօլորովին կտրել Բօլգարիային Եգէյեան ծովից, պահանջում է Կավալան և Դէդէ-աղաչը և, ինչպէս ասում են, առաջարկում է Թիւրքիային դուրս քշել բօլգարներին Թրակիայից։

◆ Վիէննայում լուր է տարածված, որ Ֆերդինանդ թագաւորը գաղտնի հեռացել է Սօֆիայից։

◆ Բօլգարական կառավարութիւնը դիմել է պետութիւններին՝ խնդրելով եւրօպական կօնֆերէնցիա հրաւիրել։ Գերմանիան, Աւստրիան և Իտալիան համաձայնութիւն են տուել։

◆ Բօլգարական մի օֆիցէր, փախչելով Ժընէվ, յայտնել է, որ զինւորները դժգոհ են պատերազմից, սպառնացել են օֆիցէրներից շատերին սպանել։ Պատերազմը ոչ մի համակրութիւն չէ գտնում զօրքի մէջ. հակացոյցեր են լինում պատերազմի դէմ ժողովրդի կողմից. դրանով է բացատրվում այն հանգամանքը, որ շարունակ պարտութիւն են կրում իրանք։ Բօլգարիայում անխուսափելի են ներքին խլրտումները։

Խմբագիր՝ ԱԼԷՔՍԱՆԴՐ ՔԱԼԱՆԹԱՐ
Հրատարակիչներ՝ Ս. ՔԱԼԱՆԹԱՐ
Ց. ՏԷՐ-ՄԱՐԿՈՍԵԱՆ
Հ. ԱՌԱՔԵԼԵԱՆ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԿԱՇԻՆ ԽՆԱՄԵԼՈՒ ԵՒ

КУСОКЪ
10 К.
Ферд. Мюльгенсъ
Teer-Seife
Дегтярное мыло
4711
противъ хроническихъ накожныхъ болѣзней и всякаго рода сыпей, какъ и для сохраненія и смягченія кожи.
Ферд. Мюльгенсъ № 4711.

քոսի, ցանի դէմ:
Կաշու քրօնիկական հիւանդութիւնների դէմ:
Մազերը խնամելու:
Մազերը թափվելու դէմ.

ԽՍԿԱԿԱՆ № 4711.
ԴԵԳՏԵԱՐ ՍԱՊՈՆԸ
շագանակագոյն արկղի մէջ է,
ունի օրէնքով հաստատված № 4711
ՄԻԱԿ ՖԱԲՐԻԿԱՆՏ
Ֆերդ. Միւլգենս ԿԵՕԼՆ, ՌԻԳԱ։

Ծախվում է ամենուրեք։
(М. 239572/239577) 5—5

Ղարաբաղի Հայոց Թեմական Հոգեւոր Դպրանոցի
համար ՀԱՐԿԱՒՈՐ ԵՆ բարձրագոյն կրթութեամբ մասնագէտ
ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐ

1) Ռուսաց լեզուի համար Գ. բաժանմունքից մինչև Զ. դասարանը երկու ուսուցիչ 24-ական դասով իւրաքանչիւրը։

2) Մաթեմատիկայի համար Գ. դասարանից մինչև Զ. դասարան 23 դասով մի ուսուցիչ։

Դասագինը 60 րուբլի։

Փորձված և յատուկ մանկավարժական պատրաստութիւն ունեցող ռուսաց լեզուի դասատուներին, բացի դասագներից, կը տրվի նաև առանձին յաւելեալ վարձատրութիւն։

3) Նաև յատուկ գեղարուեստական դպրոցն աւարտած մի ուսուցիչ նկարչութեան, գծագրութեան և գեղագրութեան Գ. բաժանմունքից մինչև Բ. դասարան 23 դասով։

Դասագին միջնակարգ կրթութիւն ունեցողին 40 ր., իսկ ճեմարանաւարտին՝ 50 ր.։

Գերադասութիւն կը տրվի ճեմարանաւարտին։ Խնդիրները պատշաճաւոր վկայականներով կամ նրանց վաւերացված պատճէններով ներկայացնել Հոգաբարձութեան մինչև օգոստոսի 10-ը։

Հասցէն՝ Шуша, Попечительству Армянской Духовной Семинаріи.

Հոգաբարձութիւն Թեմական Հոգևոր Դպրանոցի

(օ.մ.) 551. 3—1

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱՒՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ
Բժշկ. Բ. Նաւասարդեանի
Հիմնված 1880 թ.
(Կուկիա, Վօրօնցօվի արձանի հանդէպ)
Ամեն օր, բացի կիրակի օրերից
ԱՌԱՒՕՏՆԵՐԸ

«606»-ի եւ «914»-ի ներարկում բժշկական խորհրդակցութեամբ՝ 11—12 ժ.
Բ. Ա. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆ—11—12 ժ. վերարուծութեան վեներական (սիֆիլիս) հիւանդութիւն։
Բ. Գ. ԱՂԱՄԻՐԵԱՆ—1—2 ժ. ներքին և երեխայոց հիւանդութ.։
Կ. Մ. ՋԻԿՕՎԱՆԻ—9½—10 ժ. աչքի, ներքին և նեարդային հիւ.
Զ. Ի. ԲԱԲԱՆԱՍԵԱՆ—10—11 ժ. մանկաբարձութիւն, կանանց և երեխայոց հիւ.։
Ն. Տ. ՄՈՒԼԻՆ—10—12 ժ. ականջի, կոկորդի և քթի հիւանդութ.։
Մ. Գ. ԱՒԵՏԻՍԵԱՆ—11—12 ժ. մորթու, վեներական, վերարուծութեան և միզասեռ. հիւ.։
Ա. Պ. ԿԱՐԱՊԵՏԵԱՆ—12—1 ժ. ներքին և երեխայոց հիւ. և ծաղկահատ.։
Կ. Դ. ԳՈՒՐԳԵՆԻՁԷ—1—2 ժ. ներքին, երեխայոց հ. և ծաղկահատ։ Արեան, մէզի, խուխի հետազօտութիւն։
ԿԻՆ-ԲԺԻՇԿ ՏԷՐ-ԴԱՒԹԵԱՆ—12—1 ժ. մանկաբարձութիւն և կանանց հիւ.։

ԵՐԵԿՈՆԵՐԸ
Մ. Գ. ԱՒԵՏԻՍԵԱՆ—6—7 ժ.։
Կ. Դ. ԳՈՒՐԳԵՆԻՁԷ—6—7 ժ.

Վճարը 50 կ.։ Չքաւորները ձրի։ Համախորհրդի (կօնսիլիումի) և օպերացիայի համար առանձին։

Հիւանդանոցի վերատեսուչ՝
Բժշկապետ Բ. Նաւասարդեան
1. 0—72

Զգուշացէք կեղծիքներից!
ՊՐՕՎԻԶՕՐ
Г. Ф. Юргенсъ-ի
Բօրնօ-Տիմօլեան
Սապօն
Քրտինքի, պզուկների, պէպէնների, ուռերների, պզուկների և դէմքի խալերի դէմ։
ՏՈՒԱԼԷՏԱՅԻՆ ԱՆՈՒՇԱՀՈՏ
ՍԱՊՕՆ ԲԱՐՁՐ ՏԵՍԱԿԻ.
Վաճառվում է ամենուրեք։
1 կտորը 50 կոպէկ, ½ կտորը 30 կոպէկ։
(կ.) (M. 50331) 24—11

Ոսկէ մէդալ Լօնդօն 1893 թ.

Պիտակի վրայ պէտք է՝ Москва, Г. Ф. Юргенсъ.

,,Մշակի" խմբագրատանը
վաճառվում են
ՀԵՏԵՒԵԱԼ ԹԱՏԵՐԱԿԱՆ ԵՐԿԵՐԸ.

1) Հասարակութեան նեցուկները, Հ. Իբսէնի, թարգ. Լ. Բարայեանի 50 կ.
2) Նոր կեանքի շեմքում, դրամ. էսքիզ գաւառ. կեանքից, Ս. Բ-ի 40 կ.
3) Նշանվածներ, պիէս 3 գործ., Ալ. Աբէլեանի . . . . 60 կ.
4) Ուսանողներ, 3 գործ., Գ. Բաշինջաղեանի . . . . 50 կ.
5) Կայէնի ճանկերում, դրամա 5 գործ. Աւ. Ասաքէլեանի . . . 50 կ.
6) Մազդա, դրամա, 5 գործ. Լևոն Մանուէլեանի . . . . 40 կ.

Նրանք, որոնք այս գրքերից մի-մի օրինակ կը պահանջեն մեզանից փոքր կանխիկ վճարելով, կը ստանան 25% զեղչ և ճանապարհածախսը մեզ վրայ։ Վերադիր վճարով պահանջողներին կը լինի միմիայն 15%։

Հասցէն՝ Ред. газ. „Мшакъ", Тифлисъ.
(4) 10—3

Չափահասների համար
ԼՈՅՍ ԵՆ ՏԵՍԵԼ
Բժշկ. Ֆէլդշէր Ա. Գ. ԵՍԱՅԵԱՆԻ

1) **«Գաղտնի հիւանդութիւնների բժշկարան»** (կանանց և տղամարդկանց վեներական և այլ ցաւեր), բազմաթիւ բէջէպտներով, խորհուրդներով և նկարներով։ Անհրաժեշտ բժշկարան է ամեն մի չափահաս մարդու համար, նամանաւանդ այնտեղ, որտեղ չը կան մասնագէտ բժիշկներ։ Լեզուն շատ պարզ ու ամենքին հասկանալի։ Գինն է **50 կ.**։
2) **«Տրիպէր (սուսանակ) եւ նրա բժշկութիւնը»** բէջէպտներով, բազմաթիւ խորհուրդներով ու նկարներով։ Գինն է **20 կ.**։
3) **«Ներկարմատի ցավերը կամ մօզնի իւբւկէն»**, խիստ ծիծաղաշարժ վօդեվիլ միմիայն չափահասների համար։ Գինը **20 կ.**։
4) **«Սօնայի հրաշքները»** յայտնի վօդեվիլը, շատ ծիծաղաշարժ 2-րդ հրատարակութիւն։ Գինը 15 կ.
5) **«Միւնսոյի դագաղում»**, պատմուածք հայ-թիւրքական կռիւներից. գլխաւորների նկարներով։ Գինը 7 կ.։
6) **«Բաճճի կենսագրութիւնը»**, պատկերով։ Ամենքին հասկանալի գրված։ Գինը 10 կ.։

Ուղարկում եմ բոլոր գրքերը միասին։ Պահանջողները պէտք է առաջուց ղրկեն գրքերի գինը մարկաներով ճանապարհածախսի հետ՝ բոլոր գրքերը միասին—17 կոպ. (Նալօժեն՝ [illegible])։ Հասցէն՝ Тифлисъ, Семеновская ул. № 9. Медицинскому фельдшеру А. Г Есаянцу.

(Ն. կ.) 44. 100—47

ТРЕБУЙТЕ ВЕЗДѢ „ОДОБРИНЪ"
Только МИХАИЛА ЛЕБЕДЕВА
Съ надписью „Этикетъ утвержденъ правит.".

Денисовскiй

Это средство уничтожаетъ совершенно въ нѣсколько дней застарѣлыя мозоли и бородавки съ корнемъ.

Главный складъ: Кавказское Т-во Торговли Аптекар. Товарами—Тифлисъ, Баку, Батумъ
(կ.) 177. 0—16

ՈՐՈՆՎՈՒՄ Է
ԿԱՊԱԼԱՌՈՒ
մի մեծ պալիկօն կառուցանելու համար։
Հասցէն՝ гостин. «БО-МОНДЪ», երեկոյեան ժամը 5 8-ը։

ՄԻ ՀԱՅՈՒՀԻ,
որ հմուտ է ձուլհակութեան արհեստին, գլխաւորապէս ուսումնասիրած ունենալով մետաքսագործական արհեստը, և ունի վըկայական Շուշու ձուլհականոցից,
ՈՐՈՆՈՒՄ Է ՎԱՐԺՈՒՀՈՒ ՊԱՇՏՕՆ
ձեռնագործական հիմնարկութիւններում։
Հասցէն՝ «ՄՇԱԿԻ» գրասենեակ։
(օ.մ.) 553. 3—1

ՄԻ ՆՈՐ ՁԵՌՆԱՐԿ ,,ՀԻՊՆՕՏԻԶՄ" ՍՈՎՈՐԵԼՈՒ ՀԱՄԱՐ, ԱՌԱՆՑ ՈՒՍՈՒՑՉԻ։
Լոյս տեսաւ

ՅԱՐՈՒԹԻՒՆ ՇԷՔԵՐՋԵԱՆԻ
«ՄԱՐԴԿԱՅԻՆ ՄՏՔԻ ՔԱՋԱԳՈՐԾՈՒԹԻՒՆԸ ԿԱՄ ԳՈՐԾՆԱԿԱՆ ՀՈԳԵԲԱՆՈՒԹԻՒՆ» գիրքը։

Այս ձեռնարկով ամեն ոք կարող է սովորել հիպնօտիզմ, նրա պատմութիւնը և օրէնքը։ Հիպնօտիզմի փորձառական շկոլաների թէօրիաները և զանազանութիւնները։ Մարդկային մտքի երկուօրեակ բնոյթը կամ գիտակցական և ենթագիտակցական մտքի ֆունկցիաները։ Ներշնչման եւ ինքնաներշնչման օրէնքները։ Իլլիւզիա կամ հալլիւսինացիա։ Կատալեպսի։ Յետ-հիպնօտական ներշնչումն։ Հիպնօտական սէանսներ և ինչպէս տալ։ Խորհրդի փոխանցումն կամ տելեպաթի Մտաւոր պայծառատեսութիւն՝ արթուն կամ քնած դրութեան մէջ։ Ինչպէս կառավարել երեխաներին ներշնչումով։

ՄԵՐ ՄՏԱՒՈՐ ԶՕՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ ԵՒ ՆՐԱՆՑ ԶԱՐԳԱՑՆԵԼՈՒ ԿԵՐՊԵՐԸ.—«Ես եմ»-ը մարդու մէջ կառավարելու ոյժը։ Անհատականութեան կախարդութիւնը։ Դրական մտաւոր գործունէութիւն։ Ինչպէս գործածել միտքը։ Ենթագիտակցութիւն։ Յարատեւ փափաքի ոյժը։ Կենտրոնացման ոյժը։ Կամքի ոյժը։ Ենթագիտակցական հնարաւորութիւնները։ Ներշնչման ոյժը։ Ինչպէս վարժեցնել ենթագիտակցութիւնը։ Ինչպէս գործածել ամբողջ միտքը։ Հաւատի ոյժը։ Ինչպէս կառուցանել մի զօրաւոր կամք։ Ինչպէս ձեռք բերել աջողութիւն կեանքում և այլն։

Գրքի արժէքի և ուրիշ բացատրութիւնների համար դիմել նամակով հետեւեալ հասցէով.—Ռուսաստանից. Арутюнъ Шекерджянъ, 22 Гановская, Тифлисъ. Արտասահմանից Haroutun Shekergian, 22 Ganovskaya, Tiflis, Caucasus, Russia.

(կ.) 385. 25—7

Մեր պահեստի գեղարուեստ. բացիկների շրջանառութիւնը աւելի ընդարձակելու համար մենք ուղարկում ենք **ձրիաբար մի ոսկէ շեղ ալբոմ գեղարուես. 300 հատ բացիկներով** կամ թէ վճարում ենք, ալբոմի փոխարէն,

ՏԱՍՆԵՒՀԻՆԳ ՌՈՒԲԼԻ ԿԱՆԽԻԿ ԴՐԱՄՈՎ,

նրան, ով ուղիղ կերպով կը լուծէ ստորև բերված խնդիրը և կը պատուիրէ մեզ մօտ 25 հատից ոչ պակաս գեղարուեստ. բացիկներ՝ ուղարկելով 75 կ., կամ թէ վերադիր վճարով 95 կ.

?

4		
	5	
		6

?

Քառակուսի 9 վանդակներում 1—9 թւանշանները պիտի դասել այնպէս, որ իւրաքանչիւր ուղիղ գծի (3 վանդակի) գումարը լինի 15, և որ այդ գումարը կրկնվի, ըստ կարելւոյն, աւելի շատ անգամ։ Խնդիրը լուծելու իրաւունքը պատկանում է նրան, ով մեզ մօտ պատուիրած և վճարած ունի 25 հատ բացիկների համար։ Որովհետև իւրաքանչիւր անձ, ով ուղիղ կերպով լուծած ունի խնդիրը, ստանում է պրեմիա, հետևաբար՝ դիմում անելուց պիտի յայտնել, թէ որ պրեմիան է ցանկանում—ալբոմը թէ դրամը, նոյնպէս և նամակի մէջ նշանակել, առանձին բարակ թղթի մի փոքր կտորի վրա, ճշգրիտ հասցէն։

О-во МЕРКУРІЙ, ЛОДЗЬ. № 37.

(Л. 11905) 1—1

ՇԱՐԺԻՉՆԵՐ ԽՍԿԱԿԱՆ ,,ԱՐԻԱՆ"
ՀՈՐԻԶՕՆԱԿԱՆ, ՈՒՂՂԱՀԱՅԵԱՑ և ՆԱՒԱՅԻՆ
(Մազութի եւ [illegible])

1912 թիւ պատէնտային նոր մօդէլ մինչև 300 ուժի։

Ուժի մէկ միութեան համար մէկ ժամում ծախսվում է 5/8 ֆ. նաւթ։

Ջրաղացների սարք ու կարգ։



Արժանացել է 60 մեդալի եւ ամենաբարձր պարգեւների։

Ռուսիայում գործածութեան մէջ են 4200 «ԱՐԻԱՆ»։

Նասօսների և էլեկտրական կայարանների ՍԱՐՔ ու ԿԱՐԳ։

ՁԳՈՒՇԱՑԷՔ ԿԵՂԾԻՔՆԵՐԻՑ.
ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԳՐԱՍԵՆԵԱԿ Է. Ա. ԷԴԵՆԲԵՐԳԻ ԲԱԳՒՈՒՄ:

կ. 522. 0—3

ԱՌԵՒՏՐԻ ԵՒ ԱՐԴԻՒՆԱԲԵՐ. ՄԻՆԻՍՏՐՈՒԹԵԱՆ ԻՐԱՒԱՍՈՒԹԵԱՆ ՏԱԿ։
Պ.-ԲՈՒՐԳԻ ՊՕԼԻՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԴԱՍԸՆԹԱՑՔՆԵՐ
ՏԵԽՆԻԿՈՒՄ (գոյութեան 4-րդ տարին)
ՊՐՕՖԷՍՕՐՆԵՐԻ ԵՒ ԴԱՍԱՏՈՒՆԵՐԻ ԸՆԿԵՐԱԿՑՈՒԹԵԱՆ

Հիմնադ. Տեխնոլոգ. ճեմ. պրոֆէսօրներ Դ. Ֆ. Դէպպոմի, Մ. Գ. Եւանգուլօվի և Ի. Մ. Խօօմգօրօվի, Ռիգայի ուսումն. շրջ. նախկ. հոգաբ. Դ. Մ. Լևօչքինի և ինժ.-տեխն. Ն. Դ. Պօրտկօվի նախաձեռնութեամբ։ **Մեխանիկական, էլեկտրօ-տեխնիկական, ճարտարապետական և առեւտրական** բաժանմ.։ Ռուսաց. **Կայսերական Տեխն.** Ընկ. կողմից Դասընթացքները արժանացել են արծաթէ մեծ մեդալի դպրոցական ընտիր պիտոյքների և կայարանի սարք ու կարգի համար։ Ունկնդիրներին կարելիութիւն է տրվում աշխատել Բարձր. Դպրոցների արհեստանոցներում։ Ընդունվում են անձեր երկու սեռից։ Ծրագրին ուղարկ. է 5 հատ 2 կոպէկանոց մարկա ստացվելուն պէս։ Նոյն տեղը կարելի է տեղեկութիւններ ստանալ **էլեկտրօմօնտէրների կուրսերին** վերաբերեալ։ СПБ. Разъѣзжая ул., № 40.

(կ.) (П. 87076) 4—3

Աշխարհի ամենաամուրը ժամացոյցը ,,ԲՕՆԷԼ"

Իսկական Ժընեվեան եւ 19 տարվայ—միայն 4 ռուբ. 85 կոպէկով.

Մնացած բոլոր ժամացոյցները ամուր չեն նրա համար, որ, ինչպէս էլ նրանց պահելու լինես մաքրութեան մէջ, այնու ամենայնիւ. եռակի փականների բացուածքներով փոշին մտնելու է ներս և կանգնեցնելու մեխանիզմի ընթացքը։ Մենք ստացել ենք ներկայացուցչութեան իրաւունքը նոր-կատարելագործ. «Բօնէլ» գրպանի ժամաց. համար, որ Շվէյցարիայում պատէնտային է և ունի 51308 №-ը (մինչև այժմ չեղած)։ Այդ ժամաց. այն առաւելութիւնն ունի, որ մեխանիզմը ընդմիշտ ամուր փակված է և չունի բացվող ու ծածկվող փական. ընթացքը նկատելի է ցիֆերբլատի կողմից, այնպէս որ մեխանիզմի մէջ փոշի մտնելու ոչ մի հնարաւորութիւն չը կայ։ Դրա համար և խորհուրդ եմ տալիս իւրաքանչիւրին ունենալ այդ գործն. և ուղիղ ժամացոյցը։ «Բօնէլ» ժամաց. աչքի է ընկնում առանձն. իր ամուր մեխանիզմով և ուղիղ ընթացքով։ «Բօնէլ» ժամաց. կապոյտ պողպատից է (և ոչ սև), շատ տափակ, ոչ հաստ արծաթէ բուրլանոյից, ոսկեզօծ կամ արծաթազօծ փոռափի ցիֆերբլատով. միանգամայն շքեղ զարդարանքներով, գիշեր երևացող անկիւրային մայատնիկով, ընթացքը 15 քարերով, լարումը 40 ժամը մի անգամ «Րէմօնտուար»։ Այդ ժամաց. ուղ. ենք զարնիտուրի հետ միասին, բաղկացած հետեւեալ առարկաներից. 1) Թատրոն. հեռադիտակ ախրոմատիկ 4 ապակիով սովորական մեծութեան, 2) Ամերիկական ոսկուց շղթայ՝ երկ-շարք, 3) Մօդային բրելօկ և զամշեայ քսակ, 4) Ժամաց. գողացվելուց պահպ. իր, 5) Արտասահմ. կաշուց պորտմօնէ 7 բաժ. և մեխանիկ. փականով, 6) Կաուչուկէ կնիք պատուիրողի անուն-հայրանուն-ազգանունով, 7) Պարիզեան պլաստօգրաֆ, որ ստացի բնականօրէն ցոյց է տալիս ամեն տեսակ տեսարաններ, 8—13) 6 հատ շատ հետաքրք. պատկերն. պլաստօգրաֆի համար, 14) Շքեղ մատանի ամերիկ. խոշ ոսկուց «Դուբլէ» քարերով, 15) Գրպանի պիրոր գրելու համար, 16) Ածելի «à la Gillet», որի միջոցով իւրաքանչիւր ոք կարող է հեշտութեամբ ածիլվել առանց վտանգի, 17) Ածելի համար տուփ, 18) Վրձին, 19) Փոքրիկ Թաս։ Գները՝ փոխանակ **12 ռ.—միայն 4 ռ. 85 կ.**,2 զարնիտ. **9 ռ. 20 կ.**։ Նոյն զարնիտ. կանացի ժամացոյցով (փոք մայատնիկով) միևնոյն գնով։ Ժամաց. ուղ. ենք մինչև բացէնները ստուգված, 6 տար. երաշխ., վերադիր վճարով։ Ճանապարհածախսը 40 կ. (Սիբիր 75 կ.)։

Հասցէն՝ Т-во «ЭЛЕКЦІОНЪ», Варшава. отд. 93.
(7.) (В. 38173) 2—2

Типографія канцеляріи Намѣстника Его Императорскаго Величества на Кавказѣ Лорисъ-Меликовская улица, домъ казенный